

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

«ԿՐԹՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԼՐԱՑՈՒՑԻՉ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ»

ՎԱՐԿԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ

ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿ

2022 ՕԳՈՍՏՈՍ

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

ԲԿՄ	Բողոքների կարգավորման մեխանիզմ
ԲՄԿՊ	Բնապահպանական և սոցիալական կառավարման պլան
ԲՄԿՇՓ	Բնապահպանական և սոցիալական կառավարման շրջանակային փաստաթուղթ
ԲՈՒՀ	Բարձրագույն ուսումնական հաստատություն
ԲՏՃՄ	Բնագիտություն, տեխնոլոգիա, ճարտարագիտություն և մաթեմատիկա
ԳՁ	Գործառնական ձեռնարկ
ԼՖ	Լրացուցիչ ֆինանսավորում
ԾԳՌՓ	Ծրագրի գնումների ռազմավարական փաստաթուղթ
ԾԿԽ	Ծրագրի կառավարման խորհուրդ
ԿԱԻ	Կրթության ազգային ինստիտուտ
ԿԲԾ	Կրթության բարելավում ծրագիր
ԿԳՄՍՆ	Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն
ԿՁՆԱԿ	Կրթության զարգացման և նորարարությունների ազգային կենտրոն
ԿԾԿ	Կրթական ծրագրերի կենտրոն
ԿԿՏՀ	Կրթության կառավարման տեղեկատվական համակարգ
ԿՈՀԾ	Կրթության որակ և համապատասխանություն ծրագիր

ԿՏԱԿ	Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոն
ՀԲ	Համաշխարհային բանկ
ՀԿ	Հասարակական կազմակերպություն
ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
ՄԿԿՏՀ	Մասնագիտական կրթության կառավարման տեղեկատվական համակարգ
ՆՄՀ	Նորարարությունների մրցակցային հիմնադրամ
ՈԱԱԿ	Որակի ապահովման ազգային կենտրոն
ՏՀՏ	Տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաներ
ՖԿՁ	Ֆինանսական կառավարման ձեռնարկ
ՖՆ	Ֆինանսների նախարարություն

**«ԿՐԹՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԼՐԱՑՈՒՑԻՉ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ»
ՎԱՐԿԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ**

Լրացուցիչ ֆինանսավորմամբ Գործառնական ձեռնարկի բովանդակությունը

Լրացուցիչ ֆինանսավորմամբ (ԼՖ) «Կրթության բարելավում» ծրագրի գործառնական ձեռնարկը (ԳՁ) բաղկացած է հետևյալ մասերից, գլուխներից և պարբերություններից.

ՄԱՍ 1. ՀԱՄԱՌՈՏԱԳԻՐ.....	5
Բաժին 1.1 Նախաբան.....	8
Բաժին 1.2 Լրացուցիչ ֆինանսավորմամբ ծրագրի հիմնավորումը, նպատակը և կառուցվածքը.....	10
1.2.1 Ծրագրի հիմնավորումը.....	10
1.2.2 Ծրագրի նպատակը և կառուցվածքը.....	11
Բաժին 1.3 Ծրագրի սոցիալական կողմերը.....	16
Մաս 2. ԾՐԱԳՐԻ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ.....	24
Բաժին 2.1. Բաղադրիչ 1. Հանրակրթության որակի բարելավում.....	24
2.1.1. Ենթաբաղադրիչ 1.1. Դպրոցին երեխաների պատրաստվածության բարձրացում և կրթության հավասար մեկնարկային հնարավորությունների ապահովում.....	24
2.1.2. Ենթաբաղադրիչ 1.2. Աջակցություն միջնակարգ դպրոցի երրորդ աստիճանի զարգացմանը.....	32

2.1.3. Ենթաբաղադրիչ 1.3. Կրթության համակարգում տվյալների հավաքագրման և առաջընթացի մշտադիտարկման բարելավում.....	38
2.1.4. Ենթաբաղադրիչ 1.5. Հանրակրթական դպրոցների վերազինում.....	43
Քաժին 2.2 Բաղադրիչ 2. Աջակցություն Նորարարությունների մրցակցային հիմնադրամի (ՆՄՀ) զարգացմանը.....	48
ՄԱՍ 3. ԾՐԱԳՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ, ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ ԵՎ ՂԵԿԱՎԱՐՈՒՄ.....	55
Քաժին 3.1 Բաղադրիչ 3. Աջակցություն Ծրագրի կառավարմանը և մշտադիտարկմանը	55
Քաժին 3.2 Ծրագրի ղեկավարում.....	97

Հավելվածներ

Հավելված-1. «Ֆինանսական կառավարման» ղեկավար ձեռնարկ,

Հավելված-2. Ծրագրի գնումների ռազմավարական փաստաթուղթ (նախնական),

Հավելված-3. «Կրթության բարելավման ծրագրի լրացուցիչ ֆինանսավորում» վարկային ծրագրի իրականացման համար նախատեսված աշխատակազմի գործառույթները,

Հավելված-4. Բնապահպանական և սոցիալական կառավարման շրջանակային փաստաթուղթ,

Հավելված-5. «Դրամաշնորհներ նախադպրոցական կրթության միկրոծրագրերի իրականացման համար» ղեկավար ձեռնարկ,

Հավելված-6. «Հայաստանի բարձրագույն կրթության նորարարությունների մրցակցային հիմնադրամի շրջանակներում դրամաշնորհային ծրագրերի իրականացման» ղեկավար ձեռնարկ:

ՄԱՍ 1. ՀԱՄԱՌՈՏԱԳԻՐ

Նախապատրաստում

Գործառնական ձեռնարկը (այսուհետ՝ Ձեռնարկ) մշակվել է «Կրթության բարելավում» ծրագրի իրականացման համար և վերանայվել է համապատասխանաբար՝ «Կրթության բարելավման ծրագրի (այսուհետ՝ ԿԲԾ) լրացուցիչ ֆինանսավորում» (այսուհետ՝ ԼՖ) վարկային ծրագրի իրականացման համար: ԼՖ-ն կապահովի ԿԲԾ-ի շրջանակում հաջողությամբ իրականացրած գործողությունների հետագա շարունակականությունը և ծրագիրը կվերակազմավորվի հետևյալ կերպ. (ա) կընդլայնվեն հանրակրթական դպրոցներին լաբորատոր սարքավորումների տրամադրման մասշտաբները (ինչն ի սկզբանե իրականացվել է ավագ դպրոցների համար), (բ) կվերանայվեն բաղադրիչների/ենթաբաղադրիչների և արդյունքների շրջանակներում իրականացվող գործողությունները՝ ապահովելու համար դրանց համապատասխանությունը Հայաստանի կառավարության (Կառավարության) կողմից առաջիկա հինգ տարիների համար սահմանված առաջնահերթություններին. (գ) քայլեր կիրականացվեն առկա գենդերային բացերը լրացնելու և կլիմայի փոփոխության մեղմացմանն ու հարմարվողականությանն աջակցելու ուղղությամբ:

«Կրթության բարելավում» ծրագրի ավարտ է սահմանվել 2022 թվականի ապրիլի 30-ը, որից հետո ծրագիրը շարունակվելու է իրականացվել լրացուցիչ ֆինանսավորմամբ:

ՀՀ ԿԳՄՍՆ-ն և «Կրթական ծրագրերի կենտրոն» ԾԻԳ-ը երախտագիտությունն են հայտնում ՀԲ-ի թիմին և բոլոր խորհրդատուներին, որոնք աջակցել են «Կրթության բարելավում» ծրագրի լրացուցիչ ֆինանսավորման տրամադրման գործընթացում:

Գործառնական ձեռնարկի նպատակը

Գործառնական ձեռնարկի նպատակն է ներկայացնել լրացուցիչ ֆինանսավորմամբ իրականացվող «Կրթության բարելավում» ծրագրի հիմնական սկզբունքները և բովանդակությունը,

Ձեռնարկը տեղեկատվություն է ներկայացնում «Կրթության բարելավման ծրագրի լրացուցիչ ֆինանսավորում» վարկային ծրագրի բաղադրիչների և ենթաբաղադրիչների վերաբերյալ, ծառայում է որպես գործառնական ուղեցույց՝ ծրագրի պլանավորման, համակարգման և մոնիթորինգի համար:

Ձեռնարկի խնդիրները հետևյալն են.

Սահմանել ծրագրի նպատակները և խնդիրները՝ համաձայն յուրաքանչյուր բաղադրիչի և ենթաբաղադրիչի,

- Ներկայացնել ծրագրի գործողությունների նկարագրությունը և իրականացման նախապատրաստումը՝ ըստ բաղադրիչների ու ենթաբաղադրիչների,
- Մանրամասն ներկայացնել ֆինանսական կառավարման, վճարումների և գնումների ընթացակարգերը,
- Ապահովել ծրագրի իրականացման անվտանգության քաղաքականությունները՝ համաձայն մշակված ուղեցույցի,
- Սահմանել ծրագրի մոնիթորինգի և գնահատման ընթացակարգերը,
- Ղեկավարման բոլոր մակարդակներում հատկորոշել ծրագրի կառավարման պատասխանատուներին:

Ձեռնարկը ներառում է ստորև ներկայացված մի շարք փաստաթղթեր, որոնք ներկայացնում են բաղադրիչների/ենթաբաղադրիչների իրականացման մանրամասն նկարագրությունը.

1. Ֆինանսական կառավարման ղեկավար ձեռնարկ,
2. Գնումների ընթացակարգեր,
3. Բնապահպանական և սոցիալական կառավարման շրջանակային փաստաթուղթ,
4. «Դրամաշնորհներ նախադպրոցական կրթության միկրոծրագրերի իրականացման համար» ղեկավար ձեռնարկ,
5. «Հայաստանի բարձրագույն կրթության նորարարությունների մրցակցային հիմնադրամի շրջանակներում դրամաշնորհների իրականացման» ղեկավար ձեռնարկ:

Ձեռնարկը կնպաստի լրացուցիչ ֆինանսավորմամբ ծրագրի նպատակային իրականացմանը և կխթանի գործառնական բոլոր գործողությունների թափանցիկությունը:

Ձեռնարկը կկիրառվի ԿԾԿ ԾԻԳ-ի, ԿԳՄՍՆ-ի և նրա ստորաբաժանումների, պետական կառույցների, հասարակական կազմակերպությունների, կրթության ոլորտի բարեփոխումներին աջակցող դոնոր կազմակերպությունների և մասնավոր հիմնադրամների կողմի: Այն նախատեսված է նաև ծրագրի շահառուների և իրականացնողների համար: Ձեռնարկը կտեղադրվի ԿԾԿ ԾԻԳ-ի կայքէջում և հասանելի կլինի հանրությանը:

Քաժին 1.1 Նախաբան

ԿԲԾ-ն հաստատվել է 2014 թվականի մարտի 13-ին և ուժի մեջ է մտել 2014 թվականի նոյեմբերի 20-ին: ԿԲԾ-ն Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող ծրագիր է, որն ընդգրկում է կրթության բոլոր մակարդակները՝ նախադպրոցականից մինչև բարձրագույն կրթություն, միտված է միջազգային լավագույն չափորոշիչներին համահունչ ծառայություններ մատուցող կրթական համակարգի և բնակչության բոլոր սոցիալական խմբերի համար ուսման հավասար պայմանների ստեղծմանը, ինչպես նաև գիտական և հետազոտական աշխատանքների խրախուսմանը:

ԿԲԾ-ն ուղղված է զարգացնելու հանրակրթության ոլորտը՝ ապահովելով տարրական դպրոց մուտք գործող երեխաների պատրաստվածությունը, բարելավելով ավագ դպրոցներում ֆիզիկական պայմաններն ու կրթական ռեսուրսների առկայությունը, ինչպես նաև աջակցելու բարձրագույն ուսումնական հաստատություններին՝ ապահովելով կրթության որակն ու համապատասխանությունը:

Գնահատումից հետո ծրագրի ավարտի վերջնաժամկետը երկու անգամ երկարաձգվել է: Առաջին անգամ 2018 թվականի մարտի 1-ին ԿԲԾ-ի ավարտի վերջնաժամկետը երկարաձգվել է 24 ամսով՝ 2019 թվականի սեպտեմբերի 30-ից մինչև 2021 թվականի սեպտեմբերի 30-ը: Վերջնաժամկետը երկարաձգելու անհրաժեշտությունը պայմանավորված է եղել շինարարական աշխատանքների ուշացումներով և բյուջետային սահմանափակումներով, որոնք բխում էին Հայաստանում մակրոտնտեսական և հարկաբյուջետային իրավիճակի խստացումից: Բացի դրանից՝ թավշյա հեղափոխությունից հետո (2018թ. ապրիլ-մայիս) իշխանափոխության հետևանքով մի շարք այլ գործողություններ դադարեցվել էին և ենթակա էին վերանայման: Ծրագրի երկրորդ երկարաձգումը հաստատվել է 2021 թվականի սեպտեմբերի 23-ին՝ COVID-19 համաճարակի և 2020 թվականի Լեռնային Ղարաբաղի հակամարտության արդյունքում՝

ծրագրային երկու կարևոր գործողությունների ուղացումները կարգավորելու նպատակով:

Ավագ դպրոցների հիմնանորոգման աշխատանքները հետաձգվել էին հակամարտության արդյունքում առաջացած անվտանգության խնդիրների, ինչպես նաև համաճարակի հետևանքով առաջացած սահմանափակումների պատճառով:

«Աջակցություն Նորարարությունների մրցակցային հիմնադրամի զարգացմանը» բաղադրիչի շրջանակում ուղացումները պայմանավորված էին համաշխարհային բեռնափոխադրումների սահմանափակումների և գնումների գործընթացների հետ, ինչը գործողությունների իրականացման ձգձգման պատճառ էր դառնում: Վերոնշյալով պայմանավորված՝ ծրագրի ավարտ է սահմանվել 2022 թվականի ապրիլի 30-ը:

ԿԲԾ-ի -ի շրջանակում Հայաստանում ստեղծվել են 136 նախակրթարաններ (127 նախակրթարան ՀՀ տարբեր մարզերում և 9-ը Երևանում), որոնցում ընդգրկված են չորսից վեց տարեկան 13580 շահառու երեխաներ: Նախակրթարաններում ներգրավված շուրջ 258 ուսուցիչներ մասնակցել են վերապատրաստման դասընթացներին (ենթաբաղադրիչ 1.1): Հիմնանորոգվել է 13 ավագ դպրոց (10-ը Հայաստանի տարբեր մարզերում և 3-ը՝ Երևանում), 107 ավագ դպրոցներ արդեն համալրվել են բնագիտական առարկաների լաբորատորիաների համար անհրաժեշտ լաբորատոր սարքավորումներով և կահույքով (ընդհանուր 335 լաբորատորիա) (ենթաբաղադրիչ 1.2): Բացի դրանից՝ 585 դպրոցներ վերազինվել են համակարգչային սարքավորումներով, 4475 ուսուցիչներ և վարչական աշխատողներ վերապատրաստվել են ուսումնական գործընթացում SCS-գործիքների կիրառման ուղղությամբ: Ֆիզիկա, քիմիա և կենսաբանություն առարկաների համար ամբողջականացվել են էլեկտրոնային ուսումնական նյութերի մշակման աշխատանքները (<http://esource.armedu.am/>): Հիմնանորոգվել, կահավորվել և անհրաժեշտ համակարգչային սարքավորումներով համալրվել է Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոնի (ԿՏԱԿ) նոր գրասենյակը՝

հզորացված տվյալների մշակման կենտրոնով (ենթաբաղադրիչ 1.3): Վերանայվել են հանրակրթության 6 ուսումնական ոլորտների ուղղությամբ առարկայական չափորոշիչները և ծրագրերը: Առարկայական չափորոշիչներում և ծրագրերում կատարված փոփոխությունների վերաբերյալ կարճ տեղեկատվական վերապատրաստումներ են անցել շուրջ 7000 ուսուցիչներ (ենթաբաղադրիչ 1.4): Նորարարական ծրագրեր իրականացնելու և կարողությունների հզորացման նպատակով 15 բուհերի տրամադրվել են 18 դրամաշնորհային ծրագրեր, որոնց արդյունքում բուհերում ստեղծվել են նորարարական գիտահետազոտական կենտրոններ՝ հազեցած գերժամանակակից սարքավորումներով և արդիականացված կրթական բովանդակությամբ (Բաղադրիչ. 2):

Բաժին 1.2 Լրացուցիչ ֆինանսավորմամբ ծրագրի հիմնավորումը, նպատակը և կառուցվածքը

1.2.1 Ծրագրի հիմնավորումը

Ինչպես նշված է հիմնական ռազմավարական փաստաթղթերում, կրթական համակարգի հետագա ամրապնդման երկրի տեսլականն է հնարավորություններ ընձեռել իր բոլոր քաղաքացիներին դպրոցական տարիներին զարգացնելու իրենց ողջ ներուժը՝ հետագայում պատրաստ մուտք գործելու աշխատաշուկա: Հայաստանի 2014-2025 թվականների զարգացման ռազմավարությունն առաջնահերթություն է տալիս գիտելիքահենք տնտեսությանը և գիտության ու տեխնոլոգիաների ոլորտում երկրի մրցակցային առավելությունների ամրապնդմանը՝ որպես զարգացման կարևորագույն պայման: Այն ընդգծում է կրթական համակարգի բոլոր մակարդակներում կրթության որակն ու արդյունավետությունը բարելավելու և բոլորի համար հասանելի, մատչելի կրթություն ապահովելու անհրաժեշտությունը: Կառավարության վերջին ծրագիրը (2021-2026) շարունակում է հավատարիմ մնալ կրթության և գիտության զարգացման իր ուղուն՝ ընդգծելով կրթության/գիտության աշխատաշուկայի հզորացման կարևորությունը կրթական բոլոր մակարդակներում:

Կրթության ոլորտում իրականացվող գործողությունները նախատեսում են. (ա) մինչև 2026 թվականը բոլոր դասարաններում հանրակրթական նոր չափորոշիչների ներդրում, (բ) նոր դասագրքերի և ուսումնական նյութերի տրամադրում, (գ) դպրոցական ենթակառուցվածքների արդիականացում, մասնավորապես գիտական լաբորատորիաների՝ ապահովելով դրանք կահույքով և տեխնիկայով, (դ) նոր նախակրթարանների հիմնում, (ե) բարձրագույն կրթության ծրագրերի համապատասխանեցում աշխատաշուկայի կարիքներին:

Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության (ԿԳՄՄՆ) կրթության զարգացման պետական ծրագիրը կարևորում է. (ա) բոլոր երեխաների համար դպրոցին պատրաստվածության ապահովումը (բ) կրթական այնպիսի համակարգի ձևավորումը, որը կապահովի բարձրորակ կրթություն բոլորի համար, (գ) բարձր արդյունավետության ապահովումը՝ օժտելով վաղվա աշխատուժին համապատասխան հմտություններով և (դ) կրթության կազմակերպման նոր ուղիների ընդլայնումը՝ կիրառելով հեռավար ուսուցման մեթոդներ:

Տեսլականին հասնելու նպատակով Հայաստանը ձեռնամուխ է եղել հանրակրթական պետական չափորոշիչների բարեփոխմանը՝ անցում կատարելով կարողունակությունների վրա հիմնված կրթական համակարգի, որը պահանջում է փաստարկումների և հետազոտությունների վրա հիմնված, սովորողակենտրոն, վերջնարդյունքներով ուղղորդվող ուսուցում, ուսումնառություն և գնահատում:

1.2.2 Ծրագրի նպատակը և կառուցվածքը

Հիմք ընդունելով ԿԲԾ-ի շրջանակում ձեռք բերված հաջողություններն ու վերջնարդյունքները, ինչպես նաև հաշվի առնելով ՀՀ կառավարության 2021-2026 թվականների ծրագրի առաջնահերթություններին համահունչ միջոցառումների իրականացման անհրաժեշտությունը՝ ՀՀ կառավարությունը խնդրել է Համաշխարհային բանկի աջակցությունը տրամադրել լրացուցիչ ֆինանսավորում

ԿԲԾ-ի հետագա շարունակականությունն ապահովելու նպատակով, քանի որ երեխաների և ուսանողների համար բարձրորակ կրթական միջավայրի ապահովումը ՀՀ կառավարության առաջնահերթություններից է:

Լրացուցիչ ֆինանսավորմամբ ԿԲԾ-ի հիմնական նպատակներն են՝ բարելավել տարրական դպրոց մուտք գործող երեխաների դպրոցական պատրաստվածությունը, բարելավել ավագ դպրոցների ֆիզիկական պայմանները և ապահովել դրանցում կրթական ռեսուրսների առկայությունը, ապահովել լաբորատոր գույքի և սարքավորումների տրամադրումը հանրակրթական դպրոցներին և աջակցել Հայաստանի բարձրագույն ուսումնական հաստատություններին՝ ապահովելով կրթության որակն ու համապատասխանությունը:

«Կրթության բարելավման ծրագրի լրացուցիչ ֆինանսավորում» վարկային ծրագրի ավարտ է սահմանվել 2025 թվականի դեկտեմբերի 31-ը:

Ծրագիրը համահունչ է և նպաստում է Հայաստանի Հանրապետության 2019-2023 թվականների երկրի գործընկերության ամենավերջին շրջանակին (ԵԳՇ)՝ ուղղված մարդկային կապիտալի զարգացմանն ու հավասարությանը: Մասնավորապես, ծրագիրը կարևորում է բարձրորակ կրթական ծառայությունների հասանելիության ընդլայնումը՝ հմտությունների զարգացման և աշխատունակությունն ապահովելու նպատակով, և ընդգծում վաղ մանկության կրթության մեջ ընդգրկված երեխաների մասնաբաժնի ավելացման կարևորությունը: Այն կարևորում է նաև կրթական համակարգի տարբեր ոլորտներում կիրառվող հայտորոշիչ գործիքների որակի բարելավումը, բուհերի և գիտահետազոտական կենտրոնների նոր ճյուղերի ստեղծումը:

Ծրագիրն իր նպատակները կիրականացնի հետևյալ գործողությունների միջոցով.

(ա) Աշխատաշուկայի պահանջներին համապատասխան հմտությունների ձևավորում և բարելավում՝ վաղ մանկությունից մինչև պատանեկություն ընկած հատվածում տրամադրվող կրթության որակի բարձրացման միջոցով,

(բ) Բուհերի, գիտահետազոտական կենտրոնների, արդյունաբերական հիմնարկների և կառավարության համախմբում՝ գիտությունը և նորարարությունները խթանելու ավելի արդյունավետ մեխանիզմներ ստեղծելու նպատակով, ինչը սովորողներին հնարավորություն կտա ձեռք բերելու աշխատաշուկայի պահանջներին համապատասխան հմտություններ,

(գ) Փաստերի վրա հիմնված որոշումների կայացման կարողությունների հզորացում՝ տվյալների ենթակառուցվածքային համակարգի ստեղծման միջոցով, որը կտրամադրի տեղեկատվություն սովորողների, ուսուցիչների և դպրոցների վերաբերյալ՝ կրթական համակարգի բոլոր մակարդակներում:

(դ) Աշխատաշուկայում, հատկապես կանանց համար, ներգրավվածության խոչընդոտների վերացում՝ վաղ մանկության զարգացման ծրագրերում ընդգրկվածության մեծացման և գյուղական շրջաններում անապահով ընտանիքի երեխաների համար նախադպրոցական կրթության մատչելիության բարձրացման միջոցով:

Ծրագիրը լրացուցիչ ֆինանսավորմամբ կփորձի լուծում տալ ուսումնական ոլորտներում՝ սեռով պայմանավորված աշխատատեղերի հետ կապված առկա անհավասարություններին, ինչպես նաև կօգնի հաղթահարել բնական աղետների ազդեցությունը, ներառյալ կլիմայական փոփոխության հետ կապված խնդիրները և կանխել դպրոցի և կրթության համար դրանցով պայմանավորված վտանգները:

Ծրագիրը կշարունակի աջակցել ՀՀ կառավարության բարեփոխումներին կրթության ոլորտում: Մասնավորապես ծրագիրը կաջակցի. 1) նախադպրոցական հաստատություններին՝ շարունակելով տրամադրել դրամաշնորհներ և ընդգրկելով ավելի շատ խոցելի խմբեր ծրագրում, 2) ավագ դպրոցների ցանցի և ենթակառուցվածքների բարելավմանը և դրանց հաջող գործունեությանը, 3)

հանրակրթության բարելավմանը՝ դպրոցներին կրթական ռեսուրսներով և լաբորատոր սարքավորումներով ապահովելու միջոցով, 4) բարձրագույն կրթության բարեփոխումներին՝ շարունակելով Նորարարությունների մրցակցային հիմնադրամի (ՆՄՀ) գործունեությունը:

Լրացուցիչ ֆինանսավորումը կնպաստի հանրակրթության որակի բարձրացմանը և բուհերում ՆՄՀ-ի շարունակականության ապահովմանը:

Մասնավորապես առաջին բաղադրիչը, ընդլայնելով իրականացվող գործողությունների շրջանակը կշարունակի աջակցել դպրոցին երեխաների պատրաստվածության մակարդակի բարձրացմանը և հավասար մեկնարկային հնարավորությունների ապահովմանը՝ նախադպրոցական հաստատությունների ստեղծման, ուսուցիչների և դպրոցների տնօրենների վերապատրաստման միջոցով: Վերապատրաստման դասընթացները կներառեն նաև կլիմային առնչվող նյութեր, ինչպիսիք են աղետների ռիսկերի կառավարումը, կլիմայի փոփոխության հետևանքով առաջացած աղետների դեպքում՝ ուսուցման շարունակականության ապահովումը և դպրոցներում էներգախնայող միջոցների շահագործումն ու սպասարկումը: Հիմնանորոգման, դպրոցական գույքի տրամադրման և տնօրենների վերապատրաստման միջոցով կշարունակվի աջակցություն ցուցաբերել ավագ դպրոցներին: Ուշադրության կենտրոնում կլինեն ավելի շատ հանրակրթական դպրոցները, քան ավագ դպրոցները: Երեք ավագ դպրոցների հիմնանորոգման և 1 ավագ դպրոցի կառուցման ընթացքում հաշվի կառնվեն կլիմայական ռիսկերը: Լաբորատոր սարքավորումները կհամապատասխանեն էներգաարդյունավետության բարձր չափանիշներին՝ նվազեցնելով էներգիայի սպառումը և ջերմոցային գազերի արտանետումները, ուսուցիչների վերապատրաստման դասընթացների մի մասը կուղղորդվեն այն պրակտիկաների վրա, որոնք կօգնեն ներգրավել իգական սեռի ուսանողներին «Բնագիտություն», «Տեխնոլոգիա», «Ճարտարագիտություն» և «Մաթեմատիկա» (ԲՏՃՄ) առարկաների հոսքերում: Առաջին բաղադրիչի շրջանակում կավելանա նաև գործողություն՝ ուղղված կրթական համակարգում տվյալների

հավաքագրման և մոնիթորինգի բարելավմանը, որը միտված կլինի կրթական համայնքի կողմից կառավարման, ուսուցման և ուսումնառության գործընթացում համակարգի հնարավորություններն առավելագույնս օգտագործելուն:

Ծրագրի երկրորդ բաղադրիչը ֆինանսավորման լրացուցիչ փուլի միջոցով կշարունակի աջակցել բուհերին՝ նորարարական ու զարգացման ծրագրերի իրականացման գործընթացում:

Երրորդ բաղադրիչը կիրականացնի ծրագրի կառավարումը, մոնիթորինգն ու գնահատումը:

Քանի որ ոչ ԲՏՃՄ (STEM) առարկաների մասով առարակայական չափորոշիչների և ծրագրերի վերանայման միջոցով կրթության որակի բարելավմանն ուղղված միջոցառումներն ավարտվել են ԿԲԾ-ի շրջանակում, իսկ ԲՏՃՄ ուղղություններին առնչվող միջոցառումներն իրականացվել են Հայաստանում «ԵՄ-ն հանուն նորարարության» ծրագրի շրջանակում (P167562), հետևաբար լրացուցիչ ֆինանսավորմամբ այս գործողությունները չեն շարունակվի:

Ելնելով վերոնշյալից՝ «Կրթության բարելավման ծրագրի լրացուցիչ ֆինանսավորում» վարկային ծրագիրը բաղկացած կլինի հետևյալ երեք բաղադրիչներից.

Առաջին բաղադրիչը «Հանրակրթության որակի բարելավում»-ն է (ՎՋՄԲ ֆինանսավորում՝ 19.7 մլն եվրո, համաֆինանսավորում՝ 4.9 մլն եվրո), որը կազմված է չորս ենթաբաղադրիչներից.

1.1 Դպրոցին երեխաների պատրաստվածության բարձրացում և կրթության հավասար մեկնարկային հնարավորությունների ապահովում (ՎՋՄԲ ֆինանսավորում՝ 0.9 մլն. եվրո, համաֆինանսավորում՝ 0.2 մլն. եվրո),

1.2 Աջակցություն միջնակարգ դպրոցի երրորդ աստիճանի զարգացմանը (ՎՋՄԲ ֆինանսավորում՝ 9.9 մլն եվրո, համաֆինանսավորում՝ 2.5 մլն եվրո),

1.3 Կրթության համակարգում տվյալների հավաքագրման և առաջընթացի մշտադիտարկման բարելավում (*ՎՋՄԲ ֆինանսավորում՝ 0.9 մլն եվրո, համաֆինանսավորում՝ 0.2 մլն եվրո.*),

1.5 Հանրակրթական դպրոցների վերազինում (լաբորատոր սարքավորումներով և կահույքով) (*ՎՋՄԲ ֆինանսավորում՝ 8 մլն եվրո, համաֆինանսավորում՝ 2 մլն եվրո*):

Երկրորդ բաղադրիչ - Աջակցություն Նորարարությունների մրցակցային հիմնադրամի զարգացմանը (*ՎՋՄԲ ֆինանսավորում՝ 1.4 մլն եվրո, համաֆինանսավորում՝ 0.4 մլն եվրո.*),

Երրորդ բաղադրիչ – Ծրագրի կառավարում, մշտադիտարկում և գնահատում (*ՎՋՄԲ ֆինանսավորում՝ 1.5 մլն եվրո , համաֆինանսավորում՝ 0.4 մլն եվրո*):

Վերոնշյալ բաղադրիչներին/ենթաբաղադրիչներին հատկացվող գումարները որոշվել են ծրագրի փաստաթղթի ցուցանիշների հիման վրա և կարող են փոփոխվել ծրագրի իրականացման ընթացքում՝ պահպանելով ծրագրի ընդհանուր գումարը, որը կազմում է 28.2 մլն եվրո՝ (*ՎՋՄԲ-ի ֆինանսավորում՝ 22.6 մլն եվրո, համաֆինանսավորում՝ 5,6 մլն եվրո*):

Բաժին 1.3 Ծրագրի սոցիալական կողմերը

Ծրագրի շահառուները

«Կրթության բարելավման ծրագրի լրացուցիչ ֆինանսավորում» վարկային ծրագիրը բավականին մասնակցային ծրագիր է: Ծրագիրն ուղղակի և անուղղակի կընդգրկի բոլոր շահագրգիռ կողմերը: Ծրագրի հիմնական շահառուներն են.

1. «Հանրակրթության որակի բարելավում» բաղադրիչի շրջանակում

- Նախադպրոցական 4-6 տարեկան երեխաներ – նախադպրոցական դրամաշնորհային ծրագրերի իրականացումից կշահեն ավելի քան 3 000 նախադպրոցական տարիքի երեխաներ՝ ներառյալ երեխաներ խոցելի

խմբերից, աղքատ համայնքներից, հեռավոր (սահմանամերձ) և լեռնային շրջաններից և այլն,

- Ընտրված հանրակրթական դպրոցների ավելի քան 30 000 աշակերտներ կսովորեն նոր ուսումնական միջավայրում՝ հագեցած ԲՏՃՄ (STEM) ուղղությունների ժամանակակից լաբորատորիաներով և ՏՀՏ սարքավորումներով: Վերանորոգված և կահավորված դպրոցներում կսովորեն մի շարք ավագ դպրոցների աշակերտներ: Նախատեսվում է հիմնանորոգել/կառուցել և վերազինել 4 ավագ դպրոցներ, որոնք ԿԲԾ-ի շրջանակում արդեն իսկ ստացել են ժամանակակից տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների (ՏՀՏ) սարքավորումներ, առարկայական լաբորատոր սարքավորումներ, լաբորատոր կահույք,
- Ուսուցիչներ – ծրագրի գործողությունների մեծ մասը վերաբերվում է ուսուցիչներին, և նրանք՝ որպես թիրախային խումբ, հիմնական շահառուներ են,
- Դպրոցների տնօրեններ - դպրոցների պահպանման ձեռնարկի կազմում և այդ ձեռնարկի օգտագործման վերաբերյալ տնօրենների վերապատրաստում (վերապատրաստումները կներառեն մաքուր տեխնոլոգիաների շահագործումն ու պահպանումը), որոնք կբարելավեն դպրոցի տնօրենների իրավասությունն այս ոլորտում:
- Կրթության ոլորտի մասնագետներ - կրթակարգ և չափորոշիչներ մշակող մասնագետներ, ուսուցիչներ վերապատրաստողներ,
- Ծնողներ – չնայած ծրագրի գործողությունները չեն ընդգրկելու ծնողներին որպես հիմնական շահառուների, սակայն նրանք հանրության ամենամեծ խումբն են և անմիջական ազդեցություն կունենան ծրագրից:

2. «Աջակցություն Նորարարությունների մրցակցային հիմնադրամի զարգացմանը» բաղադրիչի շրջանակում հիմնական շահառուներն են.

- Համալսարանական համակազմ – համալսարանների դասախոսական, ինչպես նաև վարչական կազմը կշահեն ծրագրի իրականացումից՝ մասնակցելով ՆՄՀ ծրագրերին,
- Ուսանողներ – բարձրագույն ուսումնական հաստատությունների բոլոր ուսանողները կշահեն ՆՄՀ ծրագրերից՝ համապատասխանեցնելով կրթությունը հասարակության կարիքներին և պահանջներին,
- Մասնագետներ – ծրագրում ընդգրկված մասնագետները կկազմեն շահառուների մեկ այլ մեծ խումբ, որոնք ծրագրի միջոցով կընդլայնեն իրենց մասնագիտական ունակությունները:

Ծրագիրը մեծ ազդեցություն կունենա նաև ինստիտուցիոնալ կարողությունների հզորացման առումով: Ծրագրի իրականացման գործընթացում կներգրավվեն տարբեր կրթական և ոչ կրթական հաստատություններ, մասնավորապես.

- Նախադպրոցական հաստատություններ – մոտ 80 նախադպրոցական հաստատություններ կընդգրկվեն ծրագրում՝ ստանալով դրամաշնորհներ, որոնք ուղղված կլինեն վերանորոգման, կահավորման, գույքի, ինչպես նաև ուսումնական նյութերի և ուսուցողական գրականության ձեռք բերմանը,
- Դպրոցներ – ծրագրում ընդգրկված մոտ 200 հանրակրթական դպրոցներ կստանան նոր լաբորատոր սարքավորումներ, դասավանդման և ուսուցման նյութեր, մի շարք դպրոցներ կվերանորոգվեն և կկահավորվեն՝ նպաստելով ժամանակակից ենթակառուցվածքների ստեղծմանը, դպրոցների մոտ 1160 ուսուցիչները կվերապատրաստվեն և այլն,
- Բուհեր – թե՛ պետական և թե՛ մասնավոր բարձրագույն կրթական 5 հաստատությունները կստանան ֆինանսավորում՝ իրականացնելու նորարարական ծրագրեր,

- Պետական կառավարման մարմիններ – ԿԳՄՍ նախարարությունը, մարզային կրթության բաժինները կմասնակցեն ծրագրի շրջանակում կազմակերպված սեմինարներին, կոնֆերանսներին, աշխատաժողովներին:
- Ծրագրում ընդգրկված պետական հաստատությունները (ԳԹԿ, ԿՏԱԿ) ԿԿՏՀ և ՏՀՏ գործիքների կիրառման վերաբերյալ տրամադրվող դասընթացների միջոցով կզարգացնեն իրենց կարողությունները՝ լավագույնս իրականացնելով իրենց գործառույթները:
- Մասնավոր հատված – ծրագրի շրջանակում ստեղծված նորարարական կենտրոններում տարբեր ոլորտների մասնավոր ձեռնարկությունները, բուհերի հետ համագործակցության/համատեղ բիզնես նախագծերի շրջանակում կստանան լրացուցիչ շահույթ, որը կուղղորդվի աշխատակազմի որակավորման ու փորձի բարելավմանը, ինչպես նաև նրանց կարողությունների զգալի ամրապնդմանը:

Սոցիալական ընդգրկվածություն

ԿԲԾ-ի շրջանակում նախատեսվող և իրականացված գործողությունները միտված են բարելավելու կրթության մատչելիությունը շահառու բոլոր խմբերի համար՝ ներառելով խոցելի խմբերի երեխաներին, հատուկ կարիքներ ունեցող երեխաներին և այլն: ԼՖ-ով Ծրագիրն էլ ավելի կխթանի ներառականությունը կրթության մեջ՝ ներգրավելով հաշմանդամություն ունեցող երեխաների հարցերով մտահոգ շահագրգիռ կողմերին ավագ դպրոցների հիմնանորոգման նախագծերի վերանայման, դպրոցների վերազինման և կահավորման, լաբորատոր սարքավորումների և կահույքի տրամադրման գործընթացներում:

Ծրագիրը շահագրգիռ կողմերի շրջանակում կխրախուսի նաև նախադպրոցական կրթությունը և դրա առավելությունները հաշմանդամություն ունեցող երեխաների համար:

Ծրագրի նպատակն է ենթակառուցվածքներում ապահովել ազատ տեղաշարժվելու հնարավորություն՝ շինարարական աշխատանքներում ներառելով թեքահարթակների և ճաղավանդակների կառուցումը, դրսում և սանհանգույցներում խմելու ծորակների բարձրությունների հարմարեցումը, ինչպես նաև ապահովել ուսուցիչների ու տնօրենների կողմից հատուկ կարիք ունեցող սովորողների կրթության բարելավումը: Ծրագիրը կփորձի նաև հնարավոր դարձնել հիբրիդային և հեռավար եղանակների միջոցով ուսուցման շարունակականության ապահովումը նախադպրոցական հաստատությունների հատուկ կարիք ունեցող սովորողների համար:

Գենդերային հավասարություն

Լրացուցիչ ֆինանսավորմամբ ծրագիրը քայլեր կձեռնարկի շտկելու կրթության ոլորտում՝ աշխատատեղերի հետ կապված գենդերային խմբերի միջև գոյություն ունեցող անհավասարությունները: Մտահոգիչ է այն, որ իգական սեռի ուսանողների ներկայացվածությունը ԲՏՃՄ (STEM) ոլորտներում գնալով պակասում է, երբ նրանք առաջադիմելով կրթական մակարդակներում՝ մտնում են աշխատաշուկա: Հայաստանում դեռևս մարտահրավեր է կանանց կողմից առարկաների ընտրության գենդերային դինամիկան և նրանց թերներկայացվածությունը ԲՏՃՄ ուսումնասիրության ոլորտներում և աշխատատեղերում:

Կրթության և աշխատուժի գենդերային անհավասարություններին մասամբ նպաստող գործոններն են.

Դպրոցների ուսուցիչների մասնագիտական զարգացման մեջ գենդերային զգայունության նկատմամբ ուշադրության ցածր մակարդակը, ԲՏՃՄ առարկաների դասավանդման պրակտիկան և մեթոդաբանությունը, ինչպես նաև ԲՏՃՄ ուսումնական ոլորտներում ավելի շատ կին ուսանողների ներգրավելու և բուհերում աշխատանք փնտրելու ջանքերի և մեխանիզմների բացակայությունը: Սա ստեղծում է անհավասարակշռություն, որն էլ մեծացնում է գենդերային

տարանջատումն ըստ ոլորտների և մասնագիտությունների, նպաստելով սեռով պայմանավորված աշխատավարձերի բացին:

ԳՏՃՄ ուղղություններում կանանց ցածր մասնակցությունը և աշխատաշուկայում գենդերային անհավասարությունը նվազեցնելու համար հրամայական է, որ ՀՀ կառավարությունը ջանքեր գործադրի կանխելու ուսուցիչների, դպրոցների տնօրենների և համալսարանների պրոֆեսորադասախոսական կազմի սեռով պայմանավորված հնարավոր կողմնակալությունը:

ԼՖ-ն կաջակցի ՀՀ կառավարության հանձնառությանը կրթության մեջ գենդերային հավասարության սկզբունքների ինտեգրման հարցում, որն արտացոլված է ազգային քաղաքականության, այդ թվում նաև՝ 2010 թվականին ընդունված Գենդերային քաղաքականության հայեցակարգում:

Ծրագիրը կաջակցի ԲՏՃՄ (STEM) ուղղություններում կանանց թերներկայացվածության բացը կրճատելուն ուղղված միջոցառումների իրականացմանը՝ երկու եղանակով. 1) ծրագրի շրջանակում ուսուցիչների վերապատրաստման ծրագրերում կներառվեն գենդերազգային մոտեցումներ և մեթոդոլոգիաներ, որոնք կօգնեն ուսուցիչներին ներգրավել իգական սեռի ուսանողներ ավագ դպրոցների ԲՏՃՄ հոսքերում, և 2) ծրագրի շրջանակում բուհերը կխրախուսվեն կիրառելու մեխանիզմներ, որոնք կնպաստեն ավելի շատ կին ուսանողներ ԲՏՃՄ ուղղություններում և ավելի շատ կին դասախոսներ բուհերի ԲՏՃՄ ուղղություններում ներգրավելուն:

Կլիմայական օգուտներ

ԼՖ-ի շրջանակում վերանայված գործողությունները կներառեն միջոցառումներ, որոնք աջակցում են կլիմայի փոփոխության մեղմացմանն ու հարմարվողականությանը՝ առավել մեծացնելով կլիմայական օգուտներն առկա և վերանայված գործողություններում:

Կրթության ոլորտը կարող է բարելավել իր ջանքերը, որոնք ուղղված կլինեն կլիմայի փոփոխություններին: Ոլորտի դիմակայությունը և կլիմայի

փոփոխությանը հարմարվողականությունը բարելավելու նպատակով, հատկապես առավել խոցելի բնակչության համար, կարևոր է. (ա) բարձրացնել կլիմայի փոփոխությունից ակնկալվող ազդեցությունների մասին իրազեկվածությունը, (բ) դպրոցի ղեկավարության շրջանում կարողություններ ձևավորել աղետների կառավարման համապատասխան պլաններ մշակելու համար, (գ) ավելացնել թվային ծառայությունները և փոխկապակցվածությունը և (դ) ուժեղացնել դպրոցների կարողությունը՝ շարունակելու գործել և ծառայություններ մատուցել կլիմայական ցնցումների ու բնական աղետների դեպքում:

Դպրոցների հիմնանորոգման աշխատանքները կներառեն նախագծման կլիմայակայուն միջոցառումներ (օրինակ՝ կառուցվածքային ամրացում, եղանակադիմացկուն նյութերի օգտագործում և այլն) և էներգաարդյունավետ սարքերի և սարքավորումներ տեղադրում (օրինակ՝ արևային մարտկոցներ): Ծրագրի շրջանակում իրականացվող վերանորոգման և հիմնանորոգման աշխատանքներում հաշվի կառնվեն կլիմայական ռիսկերը, խոցելի կողմերը, անհրաժեշտության դեպքում կիրականացվեն կառուցվածքների ամրացում՝ եղանակի նկատմամբ դիմակայուն նյութերի օգտագործմամբ: Սա կօգնի ապահովել դպրոցական ենթակառուցվածքների ճկունությունը՝ կլիմայական փոփոխություններով պայմանավորված:

Լրացուցիչ ֆինանսավորմամբ ծրագիրը կներառի կլիմայի փոփոխություններին դիմակայելու և արձագանքելու հետևյալ գործողությունները՝ (ա) տեխնիկապես և տնտեսապես հնարավորության սահմաններում մաքուր տեխնոլոգիաների տեղադրումը (ինչպիսիք են արևային էներգիայով սնուցվող կամ ջրի արդյունավետությունը մեծացնող տեխնոլոգիաները) համապատասխան կառույցների վրա, (բ) դպրոցի տնօրենների, ուսուցիչների և անձնակազմի այլ անդամների վերապատրաստումը մաքուր տեխնոլոգիաների շահագործման և պահպանման ուղղությամբ, (գ) դպրոցի տնօրեններին, ուսուցիչներին և դպրոցական անձնակազմի այլ անդամներին տեղեկատվության տրամադրում կլիմայական փոփոխությունների և դրանց նկատմամբ տեխնոլոգիաների

աշխատանքի վերաբերյալ, (դ) դպրոցների տնօրենների, ուսուցիչների և անձնակազմի այլ անդամների վերապատրաստումներ աղետների ռիսկերի կառավարման վերաբերյալ (ե) շահագրգիռ կողմերի հետ հաղորդակցության միջոցառումների իրականացում, որոնք վերաբերում են ԼՖ-ի շրջանակում շինարարական աշխատանքներին, ներառում են տեղեկատվություն և ներգրավվածություն կլիմայի փոփոխության նախապատրաստման ու մեղմացման վերաբերյալ:

Կլիմայի և աղետների սքրինինգն է իրականացվել այս գործառնության համար, որոշվել է երկու վտանգ, որոնք բնորոշ են ծրագրի իրականացման վայրին թե՛ ներկայում և թե՛ ապագայում. (ա) երկրաֆիզիկական վտանգներ և (բ) ծայրաստիճան շատ տեղումներ, հեղեղումներ: Նման վտանգի ազդեցության մակարդակը համարվում է ցածր :

Մաս 2. ԾՐԱԳՐԻ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Բաժին 2.1. Բաղադրիչ 1. Հանրակրթության որակի բարելավում

2.1.1. Ենթաբաղադրիչ 1.1. Դպրոցին երեխաների պատրաստվածության բարձրացում և կրթության հավասար մեկնարկային հնարավորությունների ապահովում

Ենթաբաղադրիչի նկարագրություն

ԿԲԾ-ն մեկնարկել է 2015 թվականին՝ նպաստելով դրամաշնորհային ֆինանսավորմամբ կայուն, համայնքահեն նախադպրոցական հաստատությունների ստեղծմանը:

Ծրագրի իրականացման ընթացքում Հայաստանի բոլոր մարզերում. և՛ Երևան քաղաքում ստեղծվել և ներկայումս գործում են 136 նախակրթարաններ, որոնց 93 տոկոսը տեղակայված է մարզերում (հիմնականում գյուղական համայնքներում): Նախակրթարանների գերակշիռ մեծամասնությունը՝ 128 նախակրթարան ստեղծվել են դպրոցների հենքի վրա, իսկ մնացած 8-ը՝ մանկապարտեզների: Նորաստեղծ նախակրթարաններում ընդգրկված 258 դաստիարակ վերապատրաստվել է ԿԲԾ-ի շրջանակում: 2015-2020 թվականների ընթացքում ստեղծված նախակրթարանները միայն իրենց գործարկման առաջին տարում ներգրավել են ընդհանուր առմամբ 3462 երեխայի՝ նախատեսված 3450-ի փոխարեն: Բացի դրանից՝ 2015-ից մինչև 2020 թվականը ընկած ժամանակահատվածում ծրագրի շրջանակում նախադպրոցական կրթության մեջ ընդգրկվել է շուրջ 13580 երեխա, որը կազմել է ամեն տարի տարրական դասարան հաճախող երեխաների թվի 5-6 տոկոսը: Ծրագրում ընդգրկված նախադպրոցական տարիքի երեխաների մոտ բարելավվել է վաղ զարգացման գործակիցը (ՎԶԳ):

Այս ամենով հանդերձ նախադպրոցական միկրոծրագրերի և նախակրթարանների հասանելիության հետագա ընդլայնման պահանջարկը երկրում դեռևս մնում է բարձր:

Նախադպրոցական կրթության մատչելիությունը ՀՀ կառավարության առանցքային գերակայություններից մեկն է: Նախադպրոցական կրթության ոլորտում բարեփոխումների առաջնահերթ ուղղություններն են՝ օրենսդրական դաշտի, կառավարման համակարգի կատարելագործումը, տեխնիկակրթական բազաների բարելավումը, ծառայությունների մատչելիության և ընդգրկվածության բարձրացումը, անձնակազմի մասնագիտական կարողությունների զարգացումը:

Այս նպատակով նախադպրոցական ծառայություններն անհրաժեշտ է ընդլայնել այն համայնքներում, որտեղ չկան նախադպրոցական հաստատություններ կամ գործող հաստատությունները չեն կարող ներգրավել համայնքի նախադպրոցական կրթության կարիք ունեցող բոլոր երեխաներին՝ այլընտրանքային, ոչ-ծախսատար կրթական ծառայությունների ներդրման կամ ընդլայնման միջոցով:

Նախադպրոցական կրթության ոլորտում ներկայումս առկա են մի շարք խնդիրներ, որոնք լուրջ խոչընդոտ են նախադպրոցական կրթության ծառայությունների որակի բարձրացման և նախադպրոցական հաստատություններում երեխաների ընդգրկվածության բարձրացման առումով: Մասնավորապես, պետք է առանձնացնել հետևյալ խնդիրները.

- Նախադպրոցական հաստատությունների ոչ բավարար ցանցը և ծառայությունների անհասանելիությունը հատկապես գյուղական բնակավայրերի երեխաների համար,
- Համակարգի անբավարար ֆինանսավորումը, համայնքային բյուջեների սահմանափակ միջոցները, ինչը թույլ չի տալիս մեծացնել երեխաների ընդգրկվածությունը,

- Նախադպրոցական հաստատությունների շենքային անբարենպաստ պայմանները,
- Մանկավարժական անձնակազմի մասնագիտական զարգացման խնդիրները, որոնք պահանջում են մասնագիտական կանոնավոր վերապատրաստումներ և ատեստավորում:

Կառավարությունն առանձնակի կարևորվում է նախադպրոցական ավագ տարիքային խմբի՝ չորսից վեց տարեկան երեխաներին տարրական դպրոցին նախապատրաստելու խնդիրը, ինչը երեխաների համար կապահովի հավասար մեկնարկային պայմաններ տարրական դպրոցում ուսումը շարունակելու համար, կնպաստի ուսման մեջ առաջընթաց ունենալուն, ինչպես նաև կայուն հիմքեր կստեղծի նրանց անձնային ու սոցիալական հմտությունների զարգացման և ձևավորման համար:

Նախադպրոցական կրթության ծառայությունների որակի և մատչելիության բարելավումը, դրանցում երեխաների ընդգրկվածության մեծացումը նախատեսվում է իրականացնել ինչպես նախադպրոցական հաստատությունների կարողությունների ընդլայնման, այնպես էլ այլընտրանքային ոչ ծախսատար նախադպրոցական կրթության ծառայությունների ներդրման միջոցով:

Համաձայն ՀՀ կառավարության 2021-2026 թվականների ծրագրի (ՀՀ կառավարության 18.08.2021 թ. 1363-Ա որոշում)՝ 4-րդ «Մարդկային կապիտալի զարգացում» բաժնի 3-րդ «Կրթություն» կետով ամրագրված դրույթների, ինչպես նաև հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2021-2026 թվականների ծրագրով նախատեսված գործողությունները՝ «մինչև 2026 թվականը կառուցել, հիմնանորոգել կամ վերանորոգել 500 մանկապարտեզ և նախակրթարան՝ ապահովելով դրանց ամբողջական հագեցումն անհրաժեշտ գույքով և սարքավորումներով», ԼՖ-ով ԿԲԾ-ն կհամաֆինանսավորի նախադպրոցական կրթության 80 միկրոծրագրեր՝ ՀՀ հեռավոր և խոցելի համայնքներում:

Ենթաբաղադրիչի շրջանակում գործողությունների վերանայումները կներառեն մեխանիզմներ, որոնք ծրագրում կապահովեն.

Լիարժեք ֆինանսավորման կարիք ունեցող (ծրագիրն կիրականացվի ամբողջապես դրամաշնորհային միջոցներով) համայնքների ներգրավում, համայնքների հետ հաղորդակցման աշխատանքներում տեղեկատվություն տրամադրում շրջակա միջավայրի և կլիմայական փոփոխությունների նախապատրաստման և դրանց արդյունքների մեղմացման վերաբերյալ (կապված շինարարական աշխատանքների հետ), տնօրենների լրացուցիչ վերապատրաստումների իրականացում՝ դպրոցների պահպանման (ներառյալ մաքուր տեխնոլոգիաների շահագործումը և պահպանումը), աղետների ռիսկերի կառավարման, հեռավար եղանակներով ուսուցման շարունակականության վերաբերյալ և տեխնիկական աջակցության տրամադրում՝ շինարարական աշխատանքներում էներգախնայողության լուծումներն ապահովելու նպատակով:

Ենթաբաղադրիչի շրջանակում լրացուցիչ ֆինանսավորմամբ նախատեսվում է նաև (անհրաժեշտ տարածքների առկայության դեպքում) նախադպրոցական հաստատությունների հարակից տարածքներում խաղահրապարակների ստեղծում՝ դրանով իսկ նպաստելով նախադպրոցական տարիքի երեխաների ֆիզիկական դաստիարակության մեծացմանը:

Ենթաբաղադրիչի նպատակներն են.

- Երեխաներին նախապատրաստել տարրական դպրոց մուտք գործելուն՝ ապահովելով հավասար մեկնարկային հնարավորություններ,
- Մեծացնել նախադպրոցական կրթության ծրագրերում երեխաների ընդգրկվածությունը:

Ենթաբաղադրիչի խնդիրներն են.

- Աջակցել երեխաների նախադպրոցական կրթության իրականացման նոր՝ ոչ ծախսատար ծառայությունների ներդրմանը, որոնք մատչելի կլինեն բնակչության առավել անապահով խավերին, ինչպես նաև կնպաստեն գործող հաստատություններում երեխաների ընդգրկման աճին,
- Խրախուսել համայնքների նախաձեռնությունները՝ ուղղված նախադպրոցական կրթական մատչելի և շարունակական ծառայությունների մատուցմանը,
- Վերապատրաստել նախադպրոցական կրթական ծրագրեր իրականացնող հաստատությունների մանկավարժներին, տնօրեններին, վարչական անձնակազմին (վերապատրաստումները կիրականացվեն մրցույթի արդյունքում ընտրված կազմակերպության կողմից):

Ենթաբաղադրիչի շրջանակներում իրականացվող հիմնական գործողություններն են.

- Ուսումնասիրության իրականացում, որը կվերհանի սոցիալապես անապահով այն համայնքներն ու հաստատությունները, որոնք կարող են տրամադրել նախադպրոցական կրթական ծառայություններ: Կարիքների գնահատում՝ բացահայտելու այն համայնքները, որոնք անկարող են ապահովել համաֆինանսավորում ծրագրում և հետևաբար կարիք ունեն ամբողջական ֆինանսավորման,
- Իրազեկման գործողությունների կազմակերպում համայնքի ղեկավարների, ծնողների և շահագրգիռ կողմերի համար ներկայացնելու երեխաների, այդ թվում նաև հատուկ կարիք ունեցող երեխաների համար նախադպրոցական կրթության հնարավորություններն ու առավելությունները, ինչպես նաև միկրոծրագրերի իրականացման ընթացակարգերը: (հաղորդակցման միջոցառումները համայնքի կրթական հաստատությունների շահագրգիռ

կողմերի հետ կներառեն տեղեկատվություն շրջակա միջավայրի, կլիմայի փոփոխությունների դիմակայության և շինարարական աշխատանքներում՝ մեղմացման միջոցառումների վերաբերյալ),

- Հայտերի գնահատում և ընտրություն,
- Միկրոծրագրերի իրականացման համար դրամաշնորհների տրամադրում,
- Նոր նախակրթարաններում ընդգրկված ուսուցիչների և դպրոցների տնօրենների վերապատրաստում: Վերապատրաստման մոդուլներն ու ձեռնարկները կներառեն՝ ա) շենքի պահպանում (ներառյալ մաքուր տեխնոլոգիաների շահագործում և պահպանում, բ) ուսուցման շարունակականության ապահովում հիբրիդային կամ հեռավար եղանակների միջոցով (այդ թվում նաև՝ հաշմանդամություն ունեցող սովորողների համար), համաճարակաբանական, աշխարհաքաղաքական կամ կլիմայական ցնցումների հետևանքով ստացիոնար ուսուցման խափանումների դեպքում, և գ) աղետների ռիսկի կառավարում և կանխարգելում (այդ թվում նաև՝ գործողություններ, ինչպիսիք են երկրաշարժերի դեպքում վարժանքներ կամ կլիմայի հետ կապված արտակարգ իրավիճակների արձագանքման դասընթացներ ուսուցիչների համար ուսումնական ողջ տարվա ընթացքում:
- Տեխնիկական աջակցության տրամադրում միկրոծրագրերի իրականացման համար՝ ապահովելով հարմարությունների հասանելիությունը և ներառականությունը, շենքերի անվտանգ ֆիզիկական պայմանները, դասասենյակների վերանորոգումը, էներգաարդյունավետությունը մեծացնող միջոցառումների իրականացումը,
- Ծրագրի մշտադիտարկում և գնահատում:

Դրամաշնորհային ծրագրերի մանրամասն նկարագրությունը տրված է «Դրամաշնորհներ նախադպրոցական կրթական միկրոծրագրեր իրականացնող հաստատություններին» ղեկավար ձեռնարկում:

Ղեկավար ձեռնարկը մշակվել է «Կրթության որակ և համապատասխանություն» երկրորդ վարկային ծրագրի շրջանակում, որը վերանայվել ու հաստատվել է «Կրթության բարելավում» ծրագրի իրականացման համար:

Ղեկավար ձեռնարկը համապատասխանաբար վերանայվել է՝ «Կրթության բարելավման ծրագրի լրացուցիչ ֆինանսավորում» վարկային ծրագրի իրականացման համար:

Ենթաբաղադրիչի իրականացման ռիսկերը և դրանց ազդեցության նվազեցմանն ուղղված գործողությունները

Ռիսկեր	Նվազեցմանն ուղղված գործողությունները
<p>Համայնքների ներգրավվածություն միկրոծրագրերի իրականացման գործընթացում</p> <p>ցածր</p>	<p>Համայնքների ղեկավարների հետ անցկացնել միջգերատեսչական հանդիպումներ և քննարկումներ, համայնքներում իրականացնել հետևողական բացատրական աշխատանքներ և տրամադրել տեխնիկական օժանդակություն: Կազմակերպել քննարկումներ, ներկայացնել նախկինում իրականացված միկրոծրագրերի լավագույն փորձը և բացահայտել առկա խնդիրները:</p>

<p>Միկրոծրագրերի իրականացման համար համայնքների և ծնողների կողմից ներդրումների ուշացումներ</p>	<p>Ծրագրի շրջանակում ստանձնած համաֆինանսավորման պարտականությունների կատարման նպատակով համապատասխան միջոցառումների իրականացում (համայնքի ներդրումների ժամանակացույցի մշակում՝ որպես միկրոծրագրի ֆինանսավորման նախապայման): Համայնքներում իրազեկման բարձրացման միջոցառումների և խթանման աշխատանքների իրականացում՝ ծնողների, մարզպետարանների աշխատակիցների, համայնքի ներկայացուցիչների համար:</p>
<p>Նախադպրոցական հաստատությունների ժամանակավոր փակումը COVID-19 համաճարակի բռնկման պատճառով,</p>	<p>Նախակրթարանների դաստիարակների վերապատրաստումներ նոր մշակված ծեռնարկների միջոցով, որոնք կապահովեն արտակարգ իրավիճակներում ուսուցման շարունակականությունը՝ հիբրիդային կամ հեռավար եղանակներով (այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող աշակերտների համար):</p>
<p>Գյուղական համայնքներում նախադպրոցական կրթության վերապատրաստված մասնագետների բացակայություն</p>	<p>Համայնքներում դաստիարակների, որակյալ մասնագետների ներգրավման համար համապատասխան մեխանիզմների ստեղծում (այդ թվում՝ վարձատրության, աշխատանքային պայմանների բարելավման, վերապատրաստման դասընթացների իրականացման միջոցով):</p>
<p>Նախադպրոցական տարիքի երեխաների թվի կտրուկ</p>	<p>Իրականացնել նախադպրոցական միկրոծրագրեր նաև այն սահմանամերձ</p>

նվազում հատկապես սահմանամերձ համայնքներում՝ Արցախյան վերջին պատերազմով, արտագաղթով և մի շարք այլ գործոններով պայմանավորված	համայնքներում, որոնցում փոքր է նախադպրոցական տարիքի երեխաների թիվը, որոնք ընդգրկված չեն կառավարության կողմից սոցիալական աջակցություն ստացող համայնքների ցանկում, բայց դրանցում նախադպրոցական հաստատության հիմնումը մեծապես կնպաստի արտագաղթի կանխարգելմանը և կունենա գյուղապահպան նշանակություն:
--	--

Ակնկալվող արդյունքներ

Արդյունք	Գործողության ավարտ
Մատչելի և կայուն նախադպրոցական կրթական ծառայությունների ստեղծում ընտրված 80 համայնքներում	2025 թ.
Ստեղծված նախակրթարաններում ներգրավված մոտ 160 վերապատրաստված դաստիարակներ	2025 թ.
Ծրագրի աջակցությամբ նախադպրոցական կրթության մեջ մոտ 3000 չորսից վեց տարեկան երեխաների ներգրավվածություն	2025 թ.

2.1.2. Ենթաբաղադրիչ 1.2. Աջակցություն միջնակարգ դպրոցի երրորդ աստիճանի զարգացմանը

Ենթաբաղադրիչի նկարագրություն

Ավագ դպրոցների արդյունավետ գործունեությունը մեծապես պայմանավորված է ժամանակակից ենթակառուցվածքների, ինչպես նաև նորագույն լաբորատորիաների, համակարգիչների, ինտերնետի, էլեկտրոնային ուսումնական/ուսուցողական նյութերով հագեցած տարածքների, որակյալ մանկավարժական կադրերի առկայությամբ:

ԿԲԾ-ի շրջանակում այս ենթաբաղադրիչն ուղղված էր ընտրված ավագ դպրոցների հիմնանորոգմանը, համապատասխան ուսումնական և ուսուցողական սարքավորումների տրամադրմանը, ՀՀ բոլոր ավագ դպրոցներին լրացուցիչ այլ ռեսուրսների տրամադրմանը: Դպրոցներից շատերը կառուցվել են Խորհրդային Միության տարիներին և ունեն ենթակառուցվածքային թերություններ՝ ներառյալ համապատասխան ջեռուցման համակարգերի բացակայությունը, սեյսմիկ անվտանգության խնդիրները, խոնավության խնդիրները և այլն: Հիմնանորոգման բոլոր աշխատանքներն իրականացվել են պետական հաստատություններում և գոյություն ունեցող շենքերում: Ծրագրի շրջանակում չի թույլատրվել իրականացնել որևէ հիմնանորոգման աշխատանք, որը կպահանջեր վերաբնակեցում կամ հողի օտարում: Դպրոցների ընտրությունն իրականացվել է՝ ԿԳՄՍ նախարարության մշակած չափանիշների համաձայն: Չափանիշները ներառել են դպրոցի շենքի տեխնիկական պայմանները՝ ընդգրկելով կառուցվածքը, հիմքը, տանիքը, հատակը, պատերը, ջեռուցման և էլեկտրականության համակարգերը, որոնք հաշվի են առնվել կարիքների գնահատման կշիռների գործակիցները հաշվելիս: Ընտրության ընթացքում հաշվի է առնվել նաև դպրոցի կառուցման տարեթիվը, ըստ որի՝ ավելի հին դպրոցներին տրվել է ավելի բարձր միավոր: Բարձր միավորներ են տրվել նաև այն դպրոցներին, որոնք սպասարկել են ավելի շատ սովորողների և բնակավայրեր:

Ենթաբաղադրիչի շրջանակում նախատեսված 17 ավագ դպրոցներից՝ հիմնանորոգման համար անհրաժեշտ միջոցներով պայմանավորված, հնարավոր

է եղել հիմնանորոգել ընդհանուր առմամբ 13 ավագ դպրոց: Մնացած 4 ավագ դպրոցներից 3-ի հիմնանորոգումը և 1 ավագ դպրոցի կառուցումը կիրականացվի լրացուցիչ ֆինանսավորմամբ:

107 ավագ դպրոցներ համալրվել են ԲՏՃՄ (STEM) առարկաների լաբորատոր սարքավորումներով և կահույքով: Ավարտվել է ԲՏՃՄ առարկաների համար էլեկտրոնային ուսումնական նյութերի տրամադրումը:

Համաձայն ՀՀ կառավարության 2021-2026 թվականների ծրագրի (ՀՀ կառավարության 18.08.2021թ. 1363-Ա որոշում) 4-րդ «Մարդկային կապիտալի զարգացում» բաժնի 3-րդ «Կրթություն» կետով ամրագրված դրույթների՝ մասնավորապես «մինչև 2026 թվականը կառուցել, հիմնանորոգել կամ վերանորոգել առնվազն 300 դպրոց՝ ապահովելով դրանց ամբողջական հագեցումն անհրաժեշտ գույքով և սարքավորումներով», լրացուցիչ ֆինանսավորմամբ այս ենթաբաղադրիչի շրջանակում կիրականացվի 3 ավագ դպրոցների հիմնանորոգումը և 1 ավագ դպրոցի կառուցումը, ինչը համահունչ է ՀՀ կառավարության 2021-2026 թվականների ծրագրի առաջնահերթություններին:

Դպրոցների շինարարական աշխատանքների ընթացքում հաշվի կառնվեն կլիմայական ռիսկերը՝ դրանցով պայմանավորված դիմակայությունն ապահովելու նպատակով: Իրականացվող գործողությունները կվերանայվեն, ներառելով՝ դպրոցների պահպանման նպատակով մաքուր տեխնոլոգիաների օգտագործմանն ու շահագործմանը ուղղված տնօրենների վերապատրաստումները և հիմնանորոգման նախագծերում՝ էներգախնայողական լուծումները:

Միավորված ազգերի կազմակերպության զարգացման ծրագրի (ՄԱԶԾ) հետ համագործակցության շրջանակում կվերանայվեն հիմնանորոգվող 3 ավագ դպրոցների հիմնանորոգման տեխնիկական նախագծերը և վերջինիս համաֆինանսավորմամբ կիրականացվեն էներգաարդյունավետությունը

բարձրացնող միջոցառումներ: Ներդրումների մասնաբաժինը կկազմի մշակված նախագծային փաստաթղթերում ներառված էներգաարդյունավետ միջոցառումների ընդհանուր արժեքի 20 %-ից ոչ ավելի:

Հանրակրթական դպրոցներին համապատասխան և էներգաարդյունավետ առարկայական լաբորատոր սարքավորումների, այլ լրացուցիչ ռեսուրսների տրամադրմանն ուղղված գործողությունները կներառվեն ենթաբաղադրիչում 1.5-ում:

Ենթաբաղադրիչի նպատակներն են.

- 3 ավագ դպրոցների հիմնանորոգում և 1 ավագ դպրոցի կառուցում:

Ենթաբաղադրիչի խնդիրներն են.

- Ավագ դպրոցներում ֆիզիկական պայմանների բարելավում: Դասասենյակների, ճաշարանների, սպորտային տարածքների կահավորում և սարքավորումներով հագեցում:

Ենթաբաղադրիչի շրջանակներում իրականացվող հիմնական գործողություններն են.

- Իրագործելիության ուսումնասիրություն, այդ թվում՝ դպրոցների սեյսմիկ պայմանների և կլիմայի ռիսկերի փորձագիտական գնահատումներ,
- Հիմնանորոգման և վերանորոգման/վերակահավորման աշխատանքների այն նախագծերի վերանայում, որոնցում կարևորված են՝ (i) էներգախնայողությունը և թափոնները կրճատող ջրամատակարարման, ջրահեռացման և հիգիենիկ պայմաններն ու շինարարական մեթոդները, (ii) հասանելիությունը և ներառականությունը (գեյմեր և հաշմանդամություն), ինչպես նաև (iii) կլիմայի նկատմամբ դիմակայուն և ռիսկերը հաշվի առնող հիմնանորոգումը,

- Շենք-շինությունների հիմնանորոգում / կառուցում,
- Շինարարական աշխատանքների նկատմամբ համապատասխան հեղինակային և տեխնիկական վերահսկողության ապահովում,
- Դասասենյակների, ճաշարանների և սպորտային տարածքների համար գույքի ու սարքավորումների տրամադրում,
- Վերապատրաստման մոդուլների մշակում և դպրոցների պահպանման ձեռնարկների կիրառում, (ներառելով մաքուր տեխնոլոգիաների շահագործումը և տեխսպասարկումը), որոնք կնպաստեն կլիմայի փոփոխությունների նկատմամբ երկարաժամկետ դիմակայունությանը, կլիմայի հետևանքների մեղմացմանը և ենթակառուցվածքներում ներդրումների կայունությանը,
- Ենթաբաղադրիչով նախատեսված գործողությունների մշտադիտարկում և գնահատում ինչպես ենթաբաղադրիչի աշխատակազմի, այնպես էլ բնապահպանական մասնագետի կողմից՝ շինարարական աշխատանքների ողջ գործընթացում:

Ենթաբաղադրիչի իրականացման ռիսկերը և դրանց ազդեցության նվազեցմանն ուղղված գործողությունները

Ռիսկեր	Նվազեցմանն ուղղված գործողությունները
Հիմնանորոգման աշխատանքներում ներգրավված տարբեր մարմինների համակարգված աշխատանքի և դպրոցներում նախատեսված հիմնանորոգման աշխատանքների իրականացման համար թույլտվությունների ուշացումներ	Կազմակերպել հաճախակի հանդիպումներ դպրոցի հիմնանորոգման գործընթացում ներգրավված տարբեր շահագրգիռ կողմերի համապատասխան ներկայացուցիչների հետ՝ ապահովելու համակարգված գործունեություն: Շինարարական աշխատանքները ժամանակին իրականացնելու նպատակով ԿԳՄՍՆ-ից ստանալ աջակցություն՝ տեղական ինքնակառավարման

	<p>մարմիններից համապատասխան թույլտվություններ ձեռք բերելու հարցում:</p>
<p>Հիմնանորոգմանը առնչվող գործունեության սահմանափակումներ՝ կապված COVID-19 համաճարակի բռնկման հետ</p>	<p>Արտակարգ իրավիճակների դեպքում վերանայել ժամանակացույցերը, անհրաժեշտության դեպքում նաև երկարաձգել վերջնաժամկետները, ինչն էլ թույլ կտա հիմնանորոգման գործընթացում խուսափել լուրջ ուշացումներից:</p>
<p>Դպրոցի և հարակից տարածքի աղտոտում շինարարական թափոններով</p>	<p>Շինարարական նյութերի և թափոնների պահպանում տեղում նշանակված վայրերում և կազմակերպված տեղափոխում թափոնների վերջնական հեռացման վայրեր՝ տեղական ինքնակառավարման մարմինների հետ նախապես համաձայնեցնելով:</p>
<p>Հիմնանորոգման աշխատանքների ընթացքում մոտակա ճանապարհներ մուտք գործելու ուղիների արգելափակում և/կամ տեղի բնակիչների կամ գրասենյակների աշխատանքին խանգարում</p>	<p>Շինարարական աշխատանքները սկսվելուց առաջ տարածել տեղեկատվություն հիմնանորոգման աշխատանքների և տեղի բնակիչների վրա դրանց հնարավոր ազդեցության վերաբերյալ: Տրամադրել տեղեկատվություն դժգոհությունները ներկայացնելու ուղղությամբ՝ ներառելով ցուցանակներ յուրաքանչյուր շինհրապարակում, նշելով կապալառուների, տեղական մարմինների և ԿԾԿ ԾԻԳ-ի կոնտակտային տվյալները: Նախատեսել այլընտրանքային մուտքի միջոցներ (օր՝ փոքրիկ կամուրջներ և այլն) դեպի հարակից բնակելի կամ աշխատանքային տարածք, որն արգելափակված կլինի շինարարական</p>

տեխնիկայով կամ բուն շինարարությանն առնչվող այլ պատճառներով:

Ակնկալվող արդյունքներ

Արդյունք	Գործողության ավարտ
Հիմնանորոգված 3 և կառուցված 1 ավագ դպրոց՝ (կահավորված և վերազինված) ՀՀ շինարարական և անվտանգության չափանիշներին համապատասխան	2025 թ.

2.1.3. Ենթաբաղադրիչ 1.3. Կրթության համակարգում տվյալների հավաքագրման և առաջընթացի մշտադիտարկման բարելավում
Ենթաբաղադրիչի նկարագրություն

ԿԲԾ-ի շրջանակում ենթաբաղադրիչի կողմից իրականացված գործողությունները հիմք հանդիսացան ԿՏԱԿ-ի (Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոնի) կարողությունների հզորացման, տվյալների հավաքագրման ենթակառուցվածքի (ինչպիսիք են տվյալների հավաքագրումը և ինտեգրումը մեկ համակարգի մեջ) մշակման, ինչպես նաև Կրթության կառավարման և տեղեկատվական համակարգի ֆունկցիոնալությունն ու մշտադիտարկումն ապահովելու նպատակով նոր գործիքների գործարկման համար: ԿԲԾ-ի շրջանակում ընդհանուր թվով 585 դպրոցների տրամադրվել են համակարգչային սարքավորումներ, ՏՀՏ կիրառման ոլորտում վերապատրաստվել են 4475 ուսուցիչներ և վարչական աշխատողներ, իսկ Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոնի գրասենյակը վերանորոգվել և վերազինվել է՝ գործարկվելով որպես տվյալների մշակման նոր կենտրոն:

Լրացուցիչ ֆինանսավորմամբ այս ենթաբաղադրիչը Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոնի (ԿՏԱԿ) հետ համատեղ կշարունակի բարելավել ԿԳՄՄՆ կարողությունները՝ տվյալների հավաքագրման, վերլուծության

միջոցով վերահսկելու հայաստանյան դպրոցների գործունեության արդյունավետությունը:

Այս ենթաբաղադրիչը կֆինանսավորի կառավարման, ուսուցման և ուսումնառության գործառույթների բարելավումը, (օրինակ՝ ԿԿՏՀ-ի միջոցով հավաքագրված տեղեկությունների վիզուալիզացիա, մեկնաբանում և կիրառում) և կխթանի տվյալներով հիմնավորված և փաստերի վրա հիմնված կրթական քաղաքականության մշակման գործընթացը:

Լրացուցիչ ֆինանսավորմամբ նոր գործողությունները կներառեն տվյալների վիզուալիզացիայի գործիքների նոր գործառույթների մշակում և փորձարկում, որոնք կավելացվեն Կրթության կառավարման և տեղեկատվական համակարգին (ԿԿՏՀ)՝ ավելացնելով համակարգի կիրառելիությունը և բարելավելով կրթության հիմնական արդյունքների հասանելիությունը:

Ենթաբաղադրիչի շրջանակում կվերանայվեն բոլոր այն մոտեցումները, որոնք առնչվում են նոր մոդուլների (software) մշակմանը, փորձարկմանը, ինչպես նաև ԿԳՄՍՆ աշխատակիցների, կրթական հաստատությունների մանկավարժական և ոչ մանկավարժական աշխատակազմի վերապատրաստումներին, որպեսզի համակարգի հնարավորություններն առավելագույն օգտագործվեն կառավարման, ուսուցման և ուսումնառության գործընթացներում:

Կառավարման, ուսուցման և ուսումնառության գործընթացներում գործառույթների ավելացումը, որոնք կնպաստեն համակարգի բարելավմանը և դրա հասանելիությանը շահագրգիռ առավել լայն շրջանակների համար երկակի նպատակ ունի.

Առաջին - տվյալների վիզուալիզացիայի և մեկնաբանման բարելավումն ավելի լավ կտեղեկացնի շահագրգիռ կողմերի ներգրավվածության մասին: Չնայած նրան, որ ԿԲԾ-ն աջակցել է ԿՏԱԿ-ին ԿԿՏՀ-ի ստեղծման գործում, որի միջոցով հավաքագրվել են նախադպրոցական, հանրակրթական և մասնագիտական ուսումնական հաստատություններում ընդգրկված սովորողների, ուսուցիչների

տվյալները, պատրաստվել են վիճակագրական հաշվետվություններ՝ օգտագործելով լայնածավալ տվյալների բազա, այդուհանդերձ, այս հաշվետվությունները հասանելի չեն եղել կրթական լայն համայնքի (նախարարության աշխատակիցներ, դպրոցներ և ծնողներ) համար: Որպես այդպիսին, դրանց օգտագործումը սահմանափակվել է տվյալների մեկնաբանման համար տեխնիկական փորձ ունեցող անձանցով:

Երկրորդ- տեղեկացված շահագրգիռ կողմերի ներգրավվածությունն ավելի կնպաստի ապացույցների վրա հիմնված որոշումների կայացմանը և քաղաքականության իրականացմանը՝ կրթության արդյունքների բարելավմանն ուղղված միջամտությունների մեծացման միջոցով:

ԿԲԾ-ի շրջանակում արդեն իսկ իրականացվել են դպրոցների տնօրենների և ուսուցիչների ԿԿՏՀ-ի օգտագործման վերաբերյալ վերապատրաստումներ (հիմնականում հաշվետվությունների ներկայացում և մշտադիտարկում), սակայն դեռևս կարիք կա զարգացնելու ԿԳՄՄՆ աշխատակիցների, դպրոցների տնօրենների և ուսուցիչների կարողությունները՝ կրթության իրականացման իրենց սեփական վերլուծությունը կատարելու (ոլորտային, դպրոցական կամ դասարանական մակարդակներում), ինչպես նաև փորձարկում, մոնիթորինգ և գնահատում իրականացնելու համար:

Ենթաբաղադրիչի նպատակներն են.

- ԿԿՏՀ-ի բարելավման արդյունքում (նոր գործիքների ավելացում, հաշվետվությունների ստացման հնարավորությունների ընդլայնում) ունենալ արդյունավետ կրթության կառավարման համակարգ:
- Վերապատրաստումների արդյունքում ունենալ շահառուների ավելի լայն շրջանակ, որոնք արդյունավետ կօգտագործեն ԿԿՏՀ-ի հնարավորությունները:

Ենթաբաղադրիչի խնդիրներն են.

- ԿԿՏՀ-ի դերի բարձրացում՝ որպես հանրակրթական և բարձրագույն ուսումնական հաստատությունների կրթության կառավարման համակարգ,
- ԿԳՄՍՆ աշխատակիցների, ուսումնական հաստատությունների դասախոսական և ոչ դասախոսական անձնակազմի համար վերապատրաստումների անցկացում՝ բարելավված ԿԿՏՀ-ն ներկայացնելու և աշխատանքային գործընթացում դրա արդյունավետ օգտագործման գիտելիքներն ու հմտությունները զարգացնելու համար,
- Թիրախային խմբերի (ուսուցիչներ, ուսումնական հաստատությունների վարչական անձնակազմ) հմտությունների կատարելագործում ուսուցման մեջ ԿԿՏՀ-ի և ՏՀՏ գործիքների կիրառման վերաբերյալ:

Ենթաբաղադրիչով նախատեսված գործողություններն են.

- Ուսումնասիրության իրականացում՝ որոշելու հնարավոր ֆունկցիաները, որոնք պետք է ավելացվեն ԿԿՏՀ գործող համակարգին՝ այն ավելի հասանելի և ֆունկցիոնալ դարձնելու, վերլուծությունների հնարավորություններն ավելացնելու և նախկինում որոշված կրթական վերջնարդյունքները բարելավելու նպատակով,
- Տվյալների վիզուալիզացիայի գործիքների մշակում և վալիդացում, որոնք օգտատերերի լայն շրջանակի համար հստակ, համապատասխան տեղեկատվություն են մշակում՝ ներառելով նաև տվյալների վերականգնման մեխանիզմներ՝ կլիմայական աղետների պարագայում տվյալների կորուստը նախականիսելու համար,
- Մշակված նոր մոդուլների փորձարկում, մոնիթորինգ և գնահատում,
- Անհրաժեշտության դեպքում տեխնիկական միջոցների գնում՝ մոդուլ (ներ)ը ինտեգրված եղանակով գործարկելու համար,

- Դպրոցներում և հաստատություններում օգտատերերի վերապատրաստում այս համակարգերի միջոցով ստացված տվյալների վերլուծությունն օգտագործելու վերաբերյալ, ինչպես նաև դպրոցի տնօրենների, ուսուցիչների, նախարարության և ԿՏԱԿ-ի անձնակազմի վերապատրաստում՝ կառավարման, ուսուցման և ուսումնառության բարելավված գործընթացների համար ավելացված ֆունկցիայի(ների) օգտագործման վերաբերյալ:

Ենթաբաղադրիչի իրականացման ռիսկերը և դրանց ազդեցության նվազեցմանն ուղղված գործողությունները

<i>Ռիսկեր</i>	<i>Նվազեցմանն ուղղված գործողություններ</i>
Թիրախային խմբերը պատրաստ չեն կիրառել SCS-ներն ուսուցման և ուսումնառության գործընթացներում և վարչական նպատակների համար	ԿԳՄՍՆ-ի և ԿԾԿ ԾԻԳ-ի կողմից պարբերական իրազեկման միջոցառումների կազմակերպում միջնակարգ դպրոցներում և բարձրագույն ուսումնական հաստատություններում: Դպրոցների և բուհերի ներկայացուցիչների համար վերապատրաստումների կազմակերպում՝ SCS գործիքների կիրառման վերաբերյալ:
Դպրոցներում SS տեխնոլոգիաների օգտագործման հետ կապված դժվարությունների առաջացում	Օգտագործողների ուղեցույցների պատրաստում, շնորհանդեսների և վերապատրաստումների կազմակերպում, խորհրդատվության

	տրամադրում:
Աշխատակազմի վերապատրաստված անդամը փոխարինվում է	Տեխնիկական աջակցության և խորհրդատվության հարթակի ստեղծում:
Ուսուցիչների դժգոհությունը ժամանակակից կրթական սարքավորումներից, հարմարություններից և էլեկտրոնային նյութերից օգտվելու հարցում:	ԿԳՄՄՆ-ի, ԿՏԱԿ-ի և ԾԻԳ-ի կողմից դպրոցների և ուսուցիչների համար կանոնավոր իրազեկման միջոցառումների կազմակերպում: Ծրագիրը նախատեսում է վերապատրաստումներ՝ ՏՀՏ և էլեկտրոնային նյութերի կիրառման վերաբերյալ:

Ակնկալվող արդյունքներ

Արդյունք	Գործողության ավարտ
Մշտադիտարկման և գնահատման արդյունքների տվյալների վիզուալիզացման գործիքներ:	2025 թ.

2.1.4. Ենթաբաղադրիչ 1.5. Հանրակրթական դպրոցների վերազինում

Դպրոցների վերազինումն ու կահավորումը ներկայումս կրթության առաջնահերթություններից է: Դպրոցների մեծ մասում բացակայում են բնագիտական լաբորատորիաները, իսկ գործողներն այլևս չեն համապատասխանում ժամանակակից կրթության պահանջներին: Այդ նպատակով առաջնահերթ խնդիր է դպրոցներում ժամանակակից

սարքավորումներով և անհրաժեշտ կահույքով հագեցած բնագիտական ու ինժեներական լաբորատորիաների հիմնումը:

«Կրթության բարելավում» ծրագրի ենթաբաղադրիչ 1.2-ի շրջանակում 107 ավագ դպրոցներ արդեն իսկ համալրվեն են բնական գիտությունների առարկաների մասով անհրաժեշտ լաբորատոր սարքավորումներով և կահույքով (ընդհանուր 335 լաբորատորիա):

«Կրթության բարելավման ծրագրի լրացուցիչ ֆինանսավորում» վարկային ծրագրի շրջանակում այս նոր ենթաբաղադրիչը նպատակաուղղված կլինի բարելավելու հանրակրթական դպրոցների դասավանդման և ուսուցման պայմանները՝ շուրջ 200 հանրակրթական դպրոցների տրամադրելով բնագիտական և ինժեներական լաբորատոր սարքավորումներ, կահույք և նյութեր:

Համաձայն ՀՀ կառավարության 2021-2026 թվականների ծրագրի (ՀՀ կառավարության 18.08.2021 թ. 1363-Ա որոշում) 4-րդ «Մարդկային կապիտալի զարգացում» բաժնի 3-րդ «Կրթություն» կետով ամրագրված դրույթների և նաև հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2021-2026 թվականների ծրագրով նախատեսված գործողությունները, որոնք միտված են «մինչև 2026 թվականը հանրապետության բոլոր 1400 դպրոցներում ստեղծել ժամանակակից բնագիտական և ինժեներական լաբորատորիաներ՝ էապես բարելավելով կրթության որակը»՝ ԼՖ-ով այս նոր ենթաբաղադրիչը (մոդելավորված 1.2 ենթաբաղադրիչի հիման վրա, որը թիրախավորել էր ավագ դպրոցներին), նպատակաուղղված կլինի բարելավել հանրակրթական մոտ 200 դպրոցների ուսուցման և ուսումնառության պայմանները՝ տրամադրելով բնագիտական և ինժեներական լաբորատոր սարքավորումներ, կահույք և նյութեր:

Դպրոցները կընտրվեն ՀՀ մարզերից (ԿԳՄՄՆ ուղղորդմամբ), բացառությամբ Տավուշի մարզի դպրոցների, քանի որ վերջիններիս լաբորատոր

սարքավորումներ, կահույք, նյութեր և վերապատրաստումներ կտրամադրվեն «ԵՄ-Ն հանուն նորարարության» ծրագրի շրջանակներում:

Իրականացվող գործողությունների շրջանակը կընդլայնվի այս նոր ենթաբաղադրիչի ներքո և դրանք ուղղորդված կլինեն մոտավորապես 200 հանրակրթական դպրոցների համար բնագիտական և ինժեներական լաբորատոր սարքավորումների տրամադրմանը, որն ի սկզբանե իրականացվել է ենթաբաղադրիչ 1.2-ի շրջանակներում:

Լրացուցիչ ֆինանսավորմամբ գործողությունները կներառեն ուսումնասիրության իրականացում, այդ թվում նաև՝ մասնակից դպրոցների ընտրության չափորոշիչների սահմանում, յուրաքանչյուր դպրոցում կարիքների գնահատում՝ հիմնական ենթակառուցվածքների առկայությունը ապահովելու և լաբորատոր սարքավորումների օգտագործման մոնիթորինգի համակարգ ներդնելու նպատակով: Ենթաբաղադրիչի շրջանակում գործողությունների վերանայումները կներառեն գենդերազգայուն դասավանդման մեթոդների և պրակտիկայի վերաբերյալ ուսումնական ձեռնարկների մշակումը և կիրառումը՝ իգական սեռի սովորողների ներգրավվածությունը ԲՏՃՄ (STEM) ուղղություններում բարելավելու նպատակով:

Ուսուցիչների վերապատրաստման ձեռնարկը կներառի հետևյալ թեմաները.

(ա) Ուսուցիչների զգայունության բարձրացում՝ տարբեր սեռերի նկատմամբ հնարավոր կողմնակալության, սահմանափակող կարծրատիպերի և պատկերացումների, այդ թվում՝ տղամարդկանց և կանանց բնորոշ կարողությունների, ինչպես նաև գենդերային դերերի վերաբերյալ,

(բ) դասապրոցեսի ընթացքում իգական սեռի ուսանողների համար ԲՏՃՄ-ի (STEM) ճիշտ բնորոշում, (գ) ԲՏՃՄ ուղղություններում հաջողաձև կանանց օրինակների ներկայացում իգական սեռի ուսանողներին, (դ) այնպիսի միջավայրի ստեղծում, որը հնարավորություն կտա իգական սեռի ուսանողներին վերլուծելու և մշակելու տվյալները, արդյունավետ հաղորդակցվելու, վստահություն ձևավորելու,

և նաև արդյունավետ համագործակցել արական սեռի ուսանողների հետ և (v) ծնողների ներգրավում քննարկումներում՝ տղամարդկանց և կանանց բնորոշ կարողությունների, գենդերային դերերի, հնարավոր կողմնակալության և սխալ ընկալումների վերաբերյալ նրանց զգայունությունը բարձրացնելու նպատակով:

Ենթաբաղադրիչը կապահովի էներգաարդյունավետ լաբորատոր սարքավորումների ձեռքբերումը՝ էներգիայի սպառումը և ջերմոցային գազերի արտանետումները նվազեցնելու նպատակով, ինչպես նաև դրանց օգտագործման վերաբերյալ ուսուցիչների համապատասխան վերապատրաստումը:

Ենթաբաղադրիչի նպատակն է.

- Մոտ 200 հանրակրթական դպրոցներում բնագիտական և ինժեներական լաբորատորիաների հիմնում:

Ենթաբաղադրիչի հիմնական խնդիրներն են.

- Բարելավել հանրակրթական դպրոցների ուսուցման և ուսումնառության պայմանները՝ բնագիտական և ինժեներական լաբորատոր սարքավորումներ, կահույք և նյութեր տրամադրելու միջոցով:

Ենթաբաղադրիչի շրջանակում իրականացվող հիմնական գործողություններն են.

- Ուսումնասիրության իրականացում՝ սահմանելով դպրոցների ընտրության չափանիշներ,
- Յուրաքանչյուր դպրոցի կարիքների գնահատում՝ ենթակառուցվածքների առկայությունը (ջրամատակարարում և ջրահեռացում) պարզելու և համապատասխան մեխանիզմներ գործարկելու համար, որպեսզի անհրաժեշտության դեպքում տեղական ինքնակառավարման մարմիններն ապահովեն բազային ենթակառուցվածքները, նախքան սարքավորումներ և կահույք տրամադրելը,

- ԲՏՃՄ առարկաների համար լաբորատոր սարքավորումների տրամադրում, կարևորելով սարքավորումների էներգասարդյունավետությունը, ընտրված դպրոցներում էներգիայի սպառման ծավալները և ջերմոցային գազերի արտանետումները հնարավորության սահմաններում կրճատելու նպատակով,

- Համապատասխան կահույքի տրամադրում,

. Ուսուցիչների և տնօրենների վերապատրաստման նյութերի մշակում ու տրամադրում՝ օգտատիրոջ ձեռնարկի և ցուցադրական տեսանյութերի հետ մեկտեղ, որոնք կվերաբերեն լաբորատոր սարքավորումների շահագործմանը և ընթացիկ սպասարկմանը, ինչպես նաև դասապրոցեսում այս սարքավորումների օգտագործմանը՝ դասավանդման ժամանակակից մեթոդաբանությունների և թվային ուսումնասովանական նյութերի կիրառմամբ: Գործողությունը կներառի. (ա) վերապատրաստման դասընթացների մշակում և իրականացում ձեռնարկների և գենդերազգայուն ուսուցման եղանակների վերաբերյալ կարճ տեսանյութերի միջոցով, որոնք կզարգացնեն ուսուցիչների՝ ԲՏՃՄ հոսքեր իգական սեռի ավելի շատ սովորողներ ներգրավելու կարողությունը, և (բ) համակարգի մշակում և ներդրում, որը թույլ կտա կանոնավոր դասալսումների և տեսաձայնագրումների միջոցով իրականացնել լաբորատոր սարքավորումների կիրառման մոնիթորինգ:

Ենթաբաղադրիչի գործառույթների իրականացման ռիսկերը և դրանց ազդեցության նվազեցմանն ուղղված գործողությունները

<i>Ռիսկեր</i>	<i>Նվազեցմանն ուղղված գործողություններ</i>
<p>Ուսումնական հաստատություններում անհրաժեշտ ենթակառուցվածքների (ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի) բացակայություն.</p>	<p>Համապատասխան կառույցների հետ աշխատանքների իրականացում՝ խնդիրը համատեղ լուծելու նպատակով:</p>

Ուսումնական գործընթացում լաբորատոր սարքավորումների կիրառման ուղղությամբ վերապատրաստված ուսուցիչների արտահոսք ուսումնական հաստատություններից	Ուսումնական հաստատություններին ձեռնարկների տրամադրում՝ ուսումնական գործընթացում լաբորատոր սարքավորումների կիրառման վերաբերյալ:
---	--

Ակնկալվող արդյունքներ

Արդյունք	Գործողության ավարտ
Բնագիտական և ինժեներական լաբորատորիաներով հագեցած մոտ 200 հանրակրթական դպրոց	2025 թ.
Ուսումնական գործընթացում լաբորատոր սարքավորումների կիրառման ուղղությամբ վերապատրաստված շուրջ կամ մինչև 1000 ուսուցիչ	2025 թ.

Բաժին 2.2 Բաղադրիչ 2. Աջակցություն Նորարարությունների մրցակցային հիմնադրամի (ՆՄՀ) զարգացմանը

Բաղադրիչի նկարագրություն

ԿԲԾ-ի շրջանակներում ՆՄՀ-ն աջակցել է ծրագրերին, որոնց նպատակ է եղել բարելավումներ իրականացնել հետևյալ երեք փոխկապակցված ոլորտներում. (ա) համապատասխանությունն աշխատաշուկայի կարիքներին, (բ) կազմակերպչական արդյունավետություն, (գ) ընդգրկվածության

հավասարություն: ՆԱՀ-ի դրամաշնորհները մրցակցային հիմունքներով ուղղվել են բուհերում նորարարական և զարգացման ծրագրերի իրականացմանը, նրանց ընդհանուր կարողությունների՝ դասավանդման և ուսումնառության միջավայրի, հետազոտական կարողությունների և այլնի հզորացմանը: Նշված դրամաշնորհների տրամադրումը միաժամանակ ուղղված էր նպաստելու բարձրագույն ուսումնական հաստատությունների կրթական գործունեության որակի և արդյունավետության բարձրացմանը, կառավարման համակարգի զարգացմանը, մասնագիտական կրթական ծրագրերի և դասավանդման մեթոդների արդիականացմանը, կրթական գործընթացում գիտահետազոտական աշխատանքների ներդրմանը, ինչպես նաև աշխատաշուկայի հետ կապերի զարգացմանը: ՆԱՀ-ն աջակցել է բուհերի այն ծրագրերին, որոնք ուղղված են եղել կրթության արդիականության, համապատասխանության, արդյունավետության և հասանելիության բարձրացմանը: ԿԲԾ-ի շրջանակում իրականացված 18 դրամաշնորհային ծրագրերը, որոնց շահառուներն են եղել 15 բուհեր, նորարարական ծրագրերի միջոցով հնարավորություն են տվել հզորացնել բուհերի կարողությունները: Բարձրագույն ուսումնական հաստատություններում ստեղծված գերժամանակակից լաբորատորիաներն ու գերազանցության կենտրոնները մոտ ապագայում որակի նոր չափանիշ կդառնան տվյալ բնագավառների համար՝ թե՛ տեղական և թե՛ միջազգային ասպարեզներում:

Համաձայն ՀՀ կառավարության 2021-2026 թվականների ծրագրի (ՀՀ կառավարության 18.08.2021 թ. 1363-Ա որոշում) 4-րդ «Մարդկային կապիտալի զարգացում» բաժնի 3-րդ «Կրթություն» կետով ամրագրված դրույթների, և նաև հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2021-2026 թվականների ծրագրով նախատեսված բարձրագույն կրթության ոլորտի բարեփոխումները, որոնք միտված են բարձրագույն կրթության որակի շարունակական բարելավմանը, բարձրագույն կրթության մեջ հետազոտական բաղադրիչի շարունակական մեծացմանը, ուսումնական գործընթացում ժամանակակից S<S տեխնոլոգիաների կիրառմամբ ուսումնառության և դասավանդման նոր մեթոդաբանության

մշակմանը և ներդրմանը, աշխատաշուկայի նոր պահանջներին համապատասխան մասնագիտությունների մագիստրոսական ծրագրերի ներդրմանը՝ մասնագիտությունների կրթական ծրագրերի ցանկում համապատասխան կրթական ծրագրերի ընդգրկմամբ բնագիտական ուղղություններով բարձրագույն կրթության որակի զարգացմանը՝ պետական աջակցության և ինստիտուցիոնալ ներդրումների միջոցով այն հասցնելով միջազգային մակարդակի: Ծրագիրը ԼՖ-ով կշարունակի ուշադրության կենտրոնում պահել վերոնշյալ փոխկապակցված ոլորտները, հայտերի ներկայացման գործընթացում ողջունելով այն առաջարկները, որոնք նպատակ ունեն նորարարական մոտեցումներ զարգացնել և՛ բուհերում, և՛ հիմնական կրթության շրջանակում՝ ԲՏԾՄ (STEM) ուղղություններով կրթությունը զարգացնելու նպատակով:

Բաղադրիչի շրջանակում գործողությունների վերանայումները կներառեն մասնակից բուհերի համար պահանջների ավելացում, մասնավորապես՝ գենդերային հավասարակշռության հասնելու, ինչպես նաև տեղեկատվական ռազմավարությունների ներդրմամբ՝ ԲՏԾՄ ոլորտներում իգական սեռի ուսանողների և դասախոսներին ներգրավելու և պահելու նպատակով ընդունելության գործընթացում, պրոֆեսորադասախոսական կազմում վերջիններիս անդամակցության համար՝ սահմանելով համամասնություն:

ԼՖ-ով բաղադրիչի շրջանակում բուհերի համար ՆՄՀ հայտերի նոր չափանիշներ կներառվեն, որոնք (ա) կսահմանեն քվոտաներ և համամասնություններ իգական սեռի ուսանողների ընդգրկվածության ու պրոֆեսորադասախոսական կազմում վերջիններիս ներգրավվածության համար՝ բուհերում գենդերային հավասարակշռված մասնակցությունը և ներկայացվածությունը բարելավելու նպատակով, (բ) կմշակվի և կիրականացվի իրազեկման բարձրացման ռազմավարություններ՝ ուղղված պոտենցիալ կին դիմորդներին, հանրակրթական դպրոցներում սովորողներին՝ ԲՏԾՄ (STEM) ոլորտներում նրանց ներգրավվածությունը մեծացնելու նպատակով: Այս

մեխանիզմները կարող են ներառել հանրակրթական դպրոցներում ԲՏՃՄ ոլորտներին վերաբերող շնորհանդեսների կազմակերպում, ԲՏՃՄ ուղղություններով ճամբարների և այլ միջոցառումների կազմակերպում՝ համագործակցելով համապատասխան ոլորտների հետ. գրքույկների պատրաստում՝ իգական սեռի ուսանողներին կարիերայի կողմնորոշման առումով՝ ԲՏՃՄ ոլորտներ ուղղորդելու նպատակով, ինչպես նաև պատմությունների, հողվածների և տեսանյութերի պատրաստում (սոցիալական) լրատվամիջոցների և ընդհանուր տարածման համար՝ կենտրոնանալով ԲՏՃՄ ոլորտներում կանանց դերակատարության վրա:

Բաղադրիչի նպատակն է.

Բարձրացնել բարձրագույն կրթության որակը, համապատասխանությունը և մատչելիությունը, բարելավել և արդիականացնել բուհերի կրթական և ենթակառուցվածքային կարողությունները:

Բաղադրիչի հիմնական խնդիրներն են.

- Բուհերի կողմից մատուցվող կրթական ծառայությունների որակի բարձրացումը,
- Բուհերի համապատասխանության և արդիականության բարձրացման խթանումը,
- Բուհերի արդյունավետության և հավասարության խթանումը,
- Կապերի սերտացումը տնտեսության գերակա ոլորտներում՝ տնտեսական զարգացման նպատակով,
- Նոր կրթական ծրագրերի հասանելիության բարձրացումը,
- Համագործակցության խթանումը բուհերի, մասնավոր հատվածի և հետազոտական ինստիտուտների միջև:

Բաղադրիչի շրջանակում իրականացվող հիմնական գործողություններն են.

- ՆԱՀ-ի գործառնական գործընթացների և ընթացակարգերի վերանայում, որպեսզի ներառվեն ընտրության այնպիսի չափանիշներ, որոնք կխրախուսեն բուհերին ներգրավել ԲՏՃՄ ոլորտներ ավելի շատ իգական սեռի ուսանողներ և ԲՏՃՄ ուղղությամբ կրթական ծրագրերում աշխատող ավելի շատ իգական սեռի դասախոսներ,
- Մրցույթի հրավեր, դրամաշնորհային ծրագրերի ընտրություն, բուհերին դրամաշնորհների տրամադրում,
- ՆԱՀ իրականացման գործընթացի մշտադիտարկում՝ ներառյալ հարցումների իրականացում մասնակից բուհերի ուսանողների և դասախոսների շրջանում՝ որակը, արդյունավետությունը և համապատասխանությունը չափորոշելու նպատակով,
- Պետական/մասնավոր հատվածի և պոտենցիալ դոնորների հետ հնարավոր համագործակցություն՝ ՆԱՀ շարունակականության ապահովման նպատակով լրացուցիչ ֆինանսավորում ներգրավելու համար,
- Դրամաշնորհային ծրագրերի կառավարման աշխատակազմի և համապատասխան գործառույթներ իրականացնող մյուս աշխատակիցների վերապատրաստում՝ նախագծերի մշակման, կառավարչական հմտությունների, ծրագրերի մշտադիտարկման և գնահատման, ինչպես նաև գնումների իրականացման ընթացակարգերի ուղղությամբ:

Բաղադրիչի գործառույթների իրականացման ռիսկերը և դրանց ազդեցության նվազեցմանն ուղղված գործողությունները

Ռիսկեր	Նվազեցմանն ուղղված գործողություններ
Դրամաշնորհային ծրագրերի կազմման և իրականացման հարցերում անբավարար կարողություններ բուհերում	Վերապատրաստումների կազմակերպում բուհերի վարչական և կառավարման աշխատակազմի համար, համապատասխան ձեռնարկների և ուղեցույցների տրամադրում:
Թույլ համագործակցություն հասարակական կազմակերպությունների, հանրության և մասնավոր ոլորտի հետ	Համաժողովների, գիտաժողովների, կլոր-սեղանների, ոչ պաշտոնական քննարկումների կազմակերպում, ինտերակտիվ կայքէջի ստեղծում:
Ծրագրի իրականացման բոլոր փուլերում բուհերի կողմից համաֆինանսավորման շարունակական իրականացման անկարողություն	Ուսումնասիրել լրացուցիչ ֆինանսավորման աղբյուրների և հնարավորությունների ներգրավման միջոցները, ներկայացնել համապատասխան առաջարկներ:
Պետական և մասնավոր հատվածները պատրաստ չեն ֆինանսավորել բուհերի նորարական նախաձեռնությունները	Տեղեկատվության տարածման միջոցառումների անցկացում, շահագրգիռ կողմերի ակտիվ ներգրավվածությունը խթանելու նպատակով համապատասխան լծակների ստեղծում:

Ակնկալվող արդյունքներ

Արդյունք	Գործողության ավարտ
-----------------	---------------------------

<p>Բարձրագույն կրթության ոլորտում ընդլայնված գործընկերություն՝ ավելացնելով կոնսորցիումային նախագծերի թիվն առնվազն 1-ով</p>	<p>2025 թ.</p>
<p>5 նոր ՆԱՀ դրամաշնորհային ծրագրերի իրականացում</p>	<p>2025 թ.</p>

ՄԱՍ 3. ԾՐԱԳՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ, ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ ԵՎ ՂԵԿԱՎԱՐՈՒՄ

Բաժին 3.1 Բաղադրիչ 3. Աջակցություն Ծրագրի կառավարմանը և մշտադիտարմանը

ԿԾԿ-ի դերը, գործառույթները և պատասխանատվությունները

«Կրթական ծրագրերի կենտրոն» ծրագրերի իրականացման գրասենյակը ԿԾԿ ԾԻԳ-ը ստեղծվել է 1996թ. ՀՀ կառավարության կողմից՝ իրականացնելու ՀԲ-ի կողմից ֆինանսավորվող վարկային և դրամաշնորհային ծրագրերը: Այդ ժամանակվանից սկսած ԿԾԿ ԾԻԳ-ը հաջողությամբ իրականացրել է իր պարտականությունները՝ ժամանակին իրականացնելով ծրագրերը:

ԿԾԿ ԾԻԳ-ը պատասխանատու կլինի «Կրթության բարելավման ծրագրի լրացուցիչ ֆինանսավորում» վարկային ծրագրի ընդհանուր կառավարման, համակարգման, իրականացման և մոնիթորինգի համար: ԿԾԿ ԾԻԳ-ը պատասխանատու կլինի նաև ֆինանսական միջոցների կառավարման, վճարումների, հաշվապահական հաշվառման և հաշվետվողականության, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերման և ծրագրի շրջանակում իրականացվող դրամաշնորհային ծրագրերի մոնիթորինգի համար:

ԿԾԿ ԾԻԳ-ը պատասխանատու կլինի կազմակերպելու կանոնավոր հանդիպումներ ծրագրի շրջանակում տարբեր շահառուների հետ, որոնք ծրագրի իրականացման ընթացքում կաջակցեն ԿԾԿ ԾԻԳ-ին և լրացուցիչ ֆինանսավորմամբ ծրագրի իրականացմանը:

Ծրագրի իրականացման ողջ ընթացքում ԿԾԿ ԾԻԳ-ը պատասխանատու կլինի իրազեկելու բոլոր շահակից կողմերին. քաղաքականություն մշակողներին,

պետական կառավարական կառույցներին, պետական և ոչ պետական կազմակերպություններին և հանրությանը, ինչպես նաև ՀԲ-ին՝ ծրագրի ընթացքի վերաբերյալ՝ կանոնավոր կերպով իրազեկման և լուսաբանման, ինչպես նաև համապատասխան հաշվետվությունների ներկայացման միջոցով: ԿԾԿ ԾԻԳ-ի կողմից տրված տեղեկատվությունը կձառայի ավելի վաղ շրջանում բացահայտելու ծրագրի ընթացքում ի հայտ եկած խոչընդոտները, որոնց լուծման համար կընդունվեն համատեղ որոշումներ:

ԿԾԿ ԾԻԳ-ը հանդես կգա նաև որպես համակարգող օղակ կրթության բնագավառում կրթական ծրագրեր իրականացնող ՀԿ-ների, դոնոր կազմակերպությունների և այլ հաստատությունների համար՝ ապահովելով ՀՀ կառավարության կողմից ընդունված կրթության ռազմավարության համատեղելիությունը իրականացվող կրթական ծրագրերի հետ:

ԿԾԿ-ԾԻԳ-ը կհամակարգի ծրագրի հանրային իրազեկման գործընթացը՝ ապահովելով հանրության շրջանում ծրագրի իրականացման ընթացքում բարեփոխումների և ձեռքբերումների վերաբերյալ տեղեկատվության տարածումը:

Հայաստանի Հանրապետությունում ԾԻԳ-երի գործունեությունը կարգավորվում է՝ համաձայն ՀՀ օրենքների, կառավարության և վարչապետի որոշումների և ԿԳՄՍ նախարարի հրամանների:

Համաձայն կանոնադրության՝ ԿԾԿ ԾԻԳ-ի հիմնական գործառույթներն են.

- ՀՀ կառավարության անունից, իրականացնել գործառույթները՝ նախատեսված վարկային և դրամաշնորհային ծրագրերի շրջանակում:
- Կառավարել և համակարգել ծրագրերը, այդ թվում՝ համակարգել ծրագրերի իրականացմանը ներգրավված այլ կազմակերպությունների և կառույցների գործողությունները:

- Հաղորդակցվել, համագործակցել Համաշխարհային բանկի հետ ծրագրի կառավարման և վերահսկողության հարցերի շուրջ, մասնավորապես ներկայացնել հաշվետվություններ՝ ուսումնասիրման նպատակով, ստանալ անհրաժեշտ հաստատումներ, անցկացնել խորհրդատվություն ի հայտ եկած խնդիրների շուրջ, գտնել համատեղ լուծումներ և այլն:
- Պատրաստել ծրագրի իրականացման գործողությունների տարեկան բյուջեները և ծրագրերի ժամանակացույցերը՝ ըստ անհրաժեշտության ներկայացնելու համապատասխան կառույցի/մարմնի հաստատմանը:
- Պատրաստել ծրագրերի տարեկան և ընթացիկ գնումների պլանները՝ ապրանքների, ծառայությունների և աշխատանքների ձեռքբերման համար, ըստ անհրաժեշտության, ներկայացնել դրանք համապատասխան կառույցի/մարմնի հաստատմանը:
- Կազմել և կնքել պայմանագրեր, որոնք առնչվում են ծրագրերի իրականացման հետ՝ համաձայն Հայաստանի Հանրապետության օրենսդրության և ՀԲ «Գնումների կարգավորումներ ներդրումային ծրագրերի ֆինանսավորման վարկառուների համար» կարգավորումներ՝ թվագրված 2016թվականի հուլիսին, վերանայված համապատասխանաբար 2017 թվականի նոյեմբերին, 2018 թվականի օգոստոսին և 2020 թվականի նոյեմբերին:
- Ձեռնարկել ծրագրի ֆինանսական կառավարման, այդ թվում՝ պլանավորման և բյուջետավորման, հաշվապահական հաշվառման, ներքին հսկողության, դրամական հոսքերի, ֆինանսական հաշվետվությունների, արտաքին աուդիտի և վճարումների գործառույթները, ապահովել հաշիվների համալրման գործընթացը և պատասխանատու լինել ծրագրի ֆոնդերի օգտագործման համար:
- Ներկայացնել ամսական, եռամսյակային, կիսամյակային և տարեկան ընթացիկ ու ֆինանսական հաշվետվություններ՝ համապատասխան կառույցներ/մարմիններ ներկայացնելու նպատակով, համապատասխան պահանջվող ձևաչափերով:

- Մշտադիտարկել և գնահատել ծրագրի գործողությունները՝ ծրագրի արդյունքների գնահատման միջոցով, օգտագործելով գնահատման ցուցանիշները:

- Ապահովել ծրագրերի տարեկան աուդիտը և հանրայնացնել աուդիտորական հաշվետվությունները ԿԾԿ ԾԻԳ-ի պաշտոնական կայքում, ՀԲ-ի «Client Connection» էլեկտրոնային համակարգում:

ԿԳՄՍ նախարարությունը կօժանդակի ԿԾԿ ԾԻԳ-ին ծրագրի իրականացման ողջ ժամանակահատվածում: ԿԾԿ ԾԻԳ-ը պատասխանատու կլինի նաև ապահովելու ծրագրի անվտանգության համապատասխանությունը ՀԲ-ի անվտանգության քաղաքականության հետ և պատասխանատու կլինի իրականացնելու ցանկացած գնահատում՝ ելնելով անվտանգության քաղաքականությունից, ստանալով համապատասխան խորհրդատվություն փորձագետներից և ՀԲ-ի աշխատակազմից:

ԿԾԿ կառուցվածքը

Համաձայն ԿԾԿ ԾԻԳ-ի կանոնադրության՝ ԾԻԳ-ի տնօրենը նշանակվում է ՀՀ վարչապետի որոշմամբ հիմնված ընտրության արդյունքների վրա, որը սահմանված է ՀՀ կառավարության N 1668-Ն որոշմամբ՝ թվագրված 16 դեկտեմբերի, 2010 թ.: ԿԾԿ ԾԻԳ-ի տնօրենը պատասխանատու է աշխատակազմի անդամներին աշխատանքի ընդունելու համար:

ԿԾԿ ԾԻԳ-ի ներկա աշխատակազմի անդամների հետ կշարունակվեն աշխատանքային հարաբերությունները՝ ըստ անհրաժեշտության վերանայելով աշխատանքային գործառույթները:

Ներկայումս ԿԾԿ ԾԻԳ-ում պայմանագրային հիմունքներով աշխատում են անհատ խորհրդատուներ, մասնավորապես՝ ծրագրի լուսաբանող խորհրդատու և բնապահպան խորհրդատու, որոնց հետ, իրականացվող նոր ծրագրի շրջանակում, կշարունակվեն պայմանագրային հարաբերությունները՝ ելնելով

ծառայությունների շարունակելիությունից՝ համապատասխանաբար վերանայելով առաջադրանքի նկարագրությունը: ԿԾԿ ԾԻԳ-ի աշխատակազմում ընդգրկվող նոր աշխատողները կընտրվեն մրցութային հիմունքներով՝ ՀՀ կառավարության N 1668-Ն որոշման համաձայն:

«Կրթության բարելավման ծրագրի լրացուցիչ ֆինանսավորում» վարկային ծրագրի իրականացման ընթացքում ԿԾԿ ԾԻԳ-ը կունենա հետևյալ աշխատակազմը.


No	Պաշտոն	Թվաքանակ
1.	Տնօրեն	1
2.	Ծրագրի տնօրեն	1
3.	Ֆինանսական ղեկավար	1
4.	Գլխավոր հաշվապահ	1
5.	Հաշվապահ	1
6.	Գործերի կառավարիչ	1
7.	Գնումների ղեկավար	1
8.	Գնումների մասնագետ	1
9.	Իրավաբան	1
10.	Օգնական	1
11.	1.1 Ենթաբաղադրիչի ղեկավար	1
12.	1.1 Ենթաբաղադրիչի դրամաշնորհների համակարգող	2

13.	1.2 Ենթաբաղադրիչի ղեկավար	1
14.	Հիմնանորոգման աշխատանքները համակարգող ինժեներ	2
15.	1.3 Ենթաբաղադրիչի ղեկավար	1
16.	1.3 Ենթաբաղադրիչի համակարգող	1
17.	1.5 Ենթաբաղադրիչի ղեկավար	1
18.	1.5 Ենթաբաղադրիչի համակարգող	2
19.	Բաղադրիչ 2-ի ղեկավար	1
20.	Բաղադրիչ 2-ի դրամաշնորհների համակարգող	2
21.	Վարորդ	3

Վերը նշված պաշտոնների փորձը և որակավորումը պետք է համապատասխանի տվյալ պաշտոնի աշխատանքի նկարագրով սահմանված պահանջներին:

Ենթաբաղադրիչների/բաղադրիչի ղեկավարները Ծրագրերի ղեկավարի ղեկավարությամբ պատասխանատու կլինեն յուրաքանչյուր ենթաբաղադրիչի/բաղադրիչի ներքո սահմանված գործառույթների իրականացման համար: Բացի դրանից՝ ծրագրի շրջանակում տարբեր առաջադրանքների իրականացման նպատակով, առանձին պայմանագրեր կկնքվեն տեղական խորհրդատուների, փորձագետների հետ:

Ստորև ներկայացվում է ԿԾԳ ԾԻԳ-ի նոր կազմակերպչական կառուցվածքը:



**Գործողությունների կատարման պատասխանատվությունը՝ ըստ
ինստիտուցիոնալ կառույցների**

Ծրագրի իրականացման գծով առանձնացվել և սահմանվել են հետևյալ
ինստիտուցիոնալ կառույցները;

- Կենտրոնական մակարդակով ԿԳՄՍՆ-ն տարբեր ստորաբաժանումների
միջոցով կիրականացնի ծրագրի ընդհանուր վերահսկողությունը, ինչպես նաև
համապատասխան ուղղորդումը, օժանդակող փաստաթղթերի տրամադրումը ու
ծրագրի ներքո մշակված նորմատիվային փաստաթղթերի հաստատումը:

- Մարզային մակարդակով աստիճանաբար կավելանան կրթության
վարչությունների լիազորությունները, որոնք զգալի դեր կխաղան ծրագրի
իրականացման փուլում, կօժանդակեն տվյալների հավաքագրմանը,
առաջարկություններ կներկայացնեն նախարարությանը՝ իրականացման հետ
կապված հարցերի վերաբերյալ և կաջակցեն մարզային մակարդակով ծրագրերի
իրականացման մշտադիտարկման խնդիրներում:

- Համայնքային մակարդակով համայնքների ղեկավարներն ու դպրոցների
տնօրենները պատասխանատվություն կկրեն ընդհանուր որակյալ կառավարման
խնդիրներում, ինչպես նաև նախադպրոցական ծառայությունների մատուցման
ծառայությունների համաֆինանսավորման ապահովման հարցում:

- ԿՏԱԿ-ն ակտիվորեն կներգրավվի իր կարողությունների զարգացմանը ուղղված
բոլոր գործողությունների նախապատրաստման գործընթացում:

- ԿՏԱԿ-ն կիրականացնի տվյալների հավաքագրումը ու վերլուծությունը, ինչպես
նաև կաջակցի տեղեկատվության տարածման հարցում:

- ԿԾԿ ԾԻԳ-ը կիրականացնի ծրագիրը՝ կազմակերպելով գնման, իրականացման,
վերջնարդյունքների կառավարման և մշտադիտարկման գործընթացները:

Բողոքների կարգավորման մեխանիզմ

Ծրագրի կառավարմանն աջակցելու և գործառնական արդյունավետության բարձրացման նպատակով կկիրառվի բողոքների կարգավորման մեխանիզմը (ԲԿՄ): Այն կապահովի, որպեսզի շահառուներին և առավել ընդլայնված համայնքին հասանելի լինի մի «խողովակ», որի միջոցով վերջիններս կներգրավվեն ծրագրի մեջ: ԲԿՄ-ն ծրագրի աշխատակազմին կապահովի գործնական առաջարկություններով/հետադարձ կապով, ինչը նրանց թույլ կտա լինել ավելի հաշվետվողական, թափանցիկ և բաց՝ շահառուների նկատմամբ, և կբարձրացնի շահակիցների ներգրավվածությունը ծրագրում: ԲԿՄ-ն նաև կնպաստի ծրագրի և դրա խնդիրների վերաբերյալ հանրային իրազեկմանը, խարդախության և կոռուպցիայի կանխմանը, ծրագրի հնարավոր ռիսկերի մեղմացմանը ու կօժանդակի ԿԾԿ ԾԻԳ-ի ներքին կազմակերպչական գործընթացի արդյունավետությանը:

ԲԿՄ-ում ամրագրված են հետևյալ հիմնական սկզբունքները.

- Բողոքներին ընթացք կտրվի՝ պահպանելով գաղտնիության կանոնները և թափանցիկության սկզբունքը:
- Ծրագրի շահառուները կարող են օգտագործել կապի մի շարք միջոցներ (հեռախոսակապ, էլեկտրոնային հասցե, փոստային հասցե, և այլն): ԲԿՄ-ն հասանելի է բոլոր շահակիցների համար:
- ԲԿՄ-ն բաց է՝ ընդառաջ բողոքողների կարիքներին:
- Բոլոր բողոքները՝ պարզ կամ բարդ, կքննարկվեն և կկանոնակարգվեն հնարավորինս արագ ժամանակահատվածում: Բողոքներին ընթացք կտրվի արագ, վճռորոշ և կառուցողական մոտեցմամբ:
- Ծրագրից դժգոհ անձանց հորդորվում է ուղղել իրենց բողոքներն ու առարկությունները ծրագրի ղեկավարությանը:

Ծրագրի շրջանակում, բողոքարկման համակարգը մշակված է աշխատելու ծրագրային մակարդակի համար: Բողոքների կարգավորման գործառույթները ներառված են ԿԾԿ ԾԻԳ-ի աշխատակազմից հետևյալ անդամների աշխատանքային նկարագրերում. ծրագրերի ղեկավարի, ֆինանսական ղեկավարի, գործերի կառավարչի, գնումների ղեկավարի, իրավաբանի և բաղադրիչների/ենթաբաղադրիչների ղեկավարների՝ ԿԾԿ ԾԻԳ-ի տնօրենի համապատասխան հանձնարարականի համաձայն: Բողոքների կարգավորման հիմնական պատասխանատվությունը ԿԾԿ ԾԻԳ-ի տնօրենին է: Քանի որ բողոքները կարգավորող նվիրյալ և եռանդուն աշխատակիցները կարևոր են հաջողված ԲԿՄ-ի համար, ծրագրի շրջանակում կիրականացվեն բանիմաց աշխատակազմի հավաքագրում, շարունակական վերապատրաստումների և ուսումնառության հնարավորություն, ինչպես նաև աշխատակիցների գործունեության պարբերաբար ստուգում և հետադարձ կապի տրամադրում:

Բողոքների կարգավորումը ծրագրի հիմնական գործողություններից մեկն է: Կառավարումը ԲԿՄ-ն դարձնում է ծրագրի առանցքներից՝ ծրագրի կառավարմանը նվիրված հանդիպումներում բողոքարկման տվյալների և միտումների պարբերաբար քննարկումների միջոցով: Բացի դրանից՝ ծրագրի կառավարման շրջանակներում պարբերաբար կվերլուծվեն բողոքներին վերաբերող հաշվետվություններն ու մոնիթորինգի և գնահատման արդյունքում ստացված այլ տվյալները, ինչը կերաշխավորի ծրագրի իրականացման արդյունավետությունն ապահովող կառավարում: ՀԲ ներկայացվող ծրագրային հաշվետվությունները պետք է ընդգրկեն տեղեկատվություն հաշվետու ժամանակահատվածում ստացված բողոքների, դրանց ընթացքի և կարգավորման մասին:

Բողոքների կարգավորման գործընթացը ներառում է հետևյալ քայլերը.

Ծրագրի շահառուներն ու շահակիցները կարող են դիմել ԿԾԿ ԾԻԳ-ի՝ հեռախոսակապի, էլեկտրոնային փոստի, փոստի և ԿԾԿ ԾԻԳ-ի պաշտոնական


կայքի միջոցով: Բացի վերոնշյալից՝ բողոքները կարող են ներկայացվել ԿԳՄՍՆ-ի և մարզային կրթության վարչությունների միջոցով:

Քանի որ տարբեր տեսակի բողոքները պահանջում են տարբեր գործողություններ, բողոքները պետք է դասակարգվեն, որոշվեն դրանց առաջնահերթությունը, և ուղղվեն համապատասխան աշխատակցին կամ կառույցին: Մասնավորապես, ԿԾԿ ԾԻԳ-ի տնօրենը բողոքը ստանալուց հետո, իրավաբանի աջակցությամբ կդասակարգի այն, և բողոքի կարգավորման վերաբերյալ կպատրաստի համապատասխան հանձնարարական: ԿԾԿ ԾԻԳ-ի ծրագրերի ղեկավարը կհամակարգի կարգավորման ողջ գործընթացը՝ ԿԾԿ ԾԻԳ-ի տնօրենի պատասխանատվության շրջանակում:

Բողոքը ներկայացնելուց և գնահատելուց հետո կսկսվի բողոքի կարգավորման գործընթացը՝ համաձայն ԿԾԿ ԾԻԳ-ի տնօրենի համապատասխան հանձնարարականի: ԿԾԿ ԾԻԳ-ը բողոքարկողին կհաստատի բողոքի ստացումը 5 աշխատանքային օրվա ընթացքում: Կախված բողոքի տեսակից՝ կհստակեցվեն բողոքի կարգավորման գործընթացի իրականացման մանրամասն պարտականությունները (ներառյալ՝ խնդրի կարգավորման ընթացքում կատարված բոլոր աշխատանքների գրառումը, բողոքարկողի հետ հաղորդակցումը, բողոքարկման տվյալների պահպանումը և այլն): Բացի դրանից՝ հանձնարարականում կնշվեն նաև բողոքարկման վերլուծության և կարգավորման քայլերը, իրականացվելիք գործողությունների հստակ ժամանակացույցը, գործողություններից յուրաքանչյուրի համար պատասխանատու աշխատակցի անունն ու պաշտոնը և այլ տվյալներ: Եթե կարգավորման պատասխանատվությունը ԿԾԿ ԾԻԳ-ի գործառույթներից վեր է, բողոքարկումը կփոխանցվի առավել բարձր մակարդակի կառույցներին (օրինակ՝ ԿԳՄՍՆ, մարզային իշխանություններ կամ համապատասխան մարմիններ, որոնց ենթակայության տակ աշխատում է բողոքարկողը)՝ « օրենսդրությանը համաձայն: Իսկ եթե բողոքը չի առնչվում ծրագրի հետ, այն պաշտոնապես

կուղղվի պետական իշխանություններին: Բողոքարկողները պարբերաբար կստանան տվյալներ՝ իրենց բողոքի կարգավորման ուղղությամբ:

Ծրագրի շրջանակում բողոքների կարգավորման ընթացքը ներկայացված է ստորև.



----- Իրականացման գիծ
 _____ Մոնիթորինգի գիծ

Բողոքը ստանալուց հետո տեղեկատվություն կհավաքվի բողոքի վերաբերյալ՝ պարզելու դրա վավերականությունը, և գործողություններ կձեռնարկվեն բողոքը լուծելու համար:

Պարզ բողոքները (ինչպես օրինակ՝ հարցումներն ու առաջարկությունները) հաճախ կարող են արագ կարգավորվել՝ կապ հաստատելով բողոքարկողի հետ: Հնարավոր գործողությունները ներառում են հարցմանը կամ առաջարկին պատասխանելը՝ բողոքարկողներին խնդրի կարգավորման ուղղությամբ պարբերաբար տեղեկատվությամբ ապահովմամբ, պատասխանատվության միջոցների կամ պատժամիջոցների կիրառելը կամ հետագա գործողությունների նպատակով բողոքարկման փոխանցումը համակարգի մեկ այլ մակարդակ՝ համաձայն ՀՀ օրենսդրության:

Մոնիթորինգն ու գնահատումը ցանկացած ԲԿՄ-ի հաջողության համար կարևոր գործոն են: Համաձայն բողոքների կարգավորման ուղղությամբ ԿԾԿ ԾԻԳ-ի տնօրենի համապատասխան հանձնարարականի՝ ԿԾԿ ԾԻԳ-ի ծրագրերի ղեկավարը պատասխանատու է ԲԿՄ մոնիթորինգի և գնահատման համար: Մոնիթորինգը վերաբերում է բողոքների կարգավորմանը հետևելու գործընթացին, և դրանց կարգավորման ուղղությամբ իրականացված առաջընթացի չափը որոշելուն: Գնահատումը ներառում է բողոքարկման տեղեկատվության վերլուծությունը, և դրա կիրառումը քաղաքականության և/կամ գործընթացի փոփոխությունների կատարման մեջ՝ հետագայում նմանատիպ բողոքները նվազեցնելու միտումով: Այդ իսկ պատճառով ԿԾԿ ԾԻԳ-ի ծրագրերի ղեկավարի կողմից պետք է ԿԾԿ ԾԻԳ-ի տնօրենին պարբերաբար ներկայացվեն հաշվետվություններ՝ բողոքարկման տեղեկատվության վերաբերյալ (օրինակ՝ բողոքի կարգավորման միջին տևողությունը, իրականացված գործողություններից բավարարված բողոքների քանակը, առաջին իսկ հաղորդակցությամբ կարգավորված բողոքների թիվը): Առաջընթացի վերանայման նիստերի ժամանակ ծրագրի ղեկավարությունը պետք է վերահսկի բողոքի կարգավորման տեղեկատվությունը ու բողոքարկման միտումները, և պատահականության սկզբունքով պետք է զանգահարի տարբեր ոլորտների, խմբերի բողոքարկողների՝

ԲԿՄ արդյունավետ գործարկման վերաբերյալ նրանցից հետադարձ կապ ստանալու նպատակով:

Մոնիթորինգի և գնահատման տեղեկատվությունը կտեղադրվի ԿԾԿ ԾԻԳ-ի ներքին ցանցում՝ ապահովելով ծրագրի վերաբերյալ ընդհանուր տեղեկատվության հասանելիությունը ԿԾԿ ԾԻԳ-ի աշխատակիցներին:

ԲԿՄ համակարգից օգտվողները կտեղեկացվեն իրենց իրավունքի մասին, որ կայացված որոշումից դժգոհ մնալու դեպքում կարող են բողոքարկել՝ նշելով և՛ ներքին, և՛ արտաքին վերանայման տարբերակները (օրինակ՝ դատական վերանայում, մարդու իրավունքների պաշտպան, համապատասխան նախարարություններ):

Մոնիթորինգի և գնահատման շրջանակ

Ծրագրի իրականացման արդյունավետ մոնիթորինգի և գնահատման համար ԿԾԿ ԾԻԳ-ը պետք է իրականացնի ծրագրի մոնիթորինգն ու գնահատումը՝ ըստ մոնիթորինգի և գնահատման շրջանակի (այսուհետ՝ ՄԳՇ), որն անդրադառնում է հետևյալ հարցերին.

- Ի՞նչը պետք է ենթարկվի մոնիթորինգի և գնահատվի – ծրագրի բոլոր բաղադրիչներն ու ենթաբաղադրիչները պետք է պատշաճ կերպով ենթարկվեն մոնիթորինգի և գնահատվեն, ինչը կապահովի ծրագրի ամբողջական մոնիթորինգն ու գնահատումը:
- Մոնիթորինգի և գնահատման անցկացման համար անհրաժեշտ գործողությունները – յուրաքանչյուր բաղադրիչի և ենթաբաղադրիչի շրջանակում իրականացվող գործողությունները պետք է ընդգրկվեն մոնիթորինգի և գնահատման գործընթացում:
- Մոնիթորինգի և գնահատման համար պատասխանատուն – մոնիթորինգի և գնահատման գործողությունների համար հիմնական պատասխանատուն ԿԾԿ ԾԻԳ-ի ծրագրերի ղեկավարն է, որը վերահսկում և համակարգում է այդ

ուղղությամբ իրականացվող բոլոր գործողությունները: Մոնիթորինգի և գնահատման գործողությունների համակարգումը յուրաքանչյուր բաղադրիչի/ենթաբաղադրիչի շրջանակներում հանդիսանում է համապատասխան բաղադրիչի/ենթաբաղադրիչի ղեկավարի պարտականությունը:

	Ձև					
	Ծրագրի մոնիթորինգի և գնահատման պլան					
Արդյունքների շրջանակի ցուցիչ	Մոնիթորինգի և գնահատման ցուցիչի սահմանում (չափման միավոր)	Տվյալների հավաքագրման եղանակներ/աղբյուրներ	Հաճախականություն/ ժամանակացույց	Պատասխանատու անձ (անձինք)	Տեղեկատվության ներկայացում / ամփոփում	Տեղեկատվության կիրառում/լսարան

--	--	--	--	--	--	--

- Պլանավորված մոնիթորինգի և գնահատման գործողություններն իրականացնելիս ծրագրի մոնիթորինգը և գնահատումը պետք է մեկնարկի ծրագրի իրականացման սկզբում և շարունակվի ծրագրի իրականացման ողջ ընթացքում՝ ծառայելով որպես ծրագրի իրականացման ընթացքի և արդյունքների արձանագրության գործիք: ԿԾԿ ԾԻԳ-ը կմշակի ծրագրի մոնիթորինգի և գնահատման պլանը, ըստ ծրագրի բաղադրիչներով և ենթաբաղադրիչներով սահմանված հատուկ գործողությունների, և կթարմացնի այն տարեկան կտրվածքով՝ մինչև յուրաքանչյուր տարվա փետրվարի 15-ը: Այդ պլանը կկիրառվի ծրագրի իրականացման համակարգման և արդյունքների գնահատման համար: Մոնիթորինգի և գնահատման պլանը կմշակվի ստորև ներկայացված ձևին համապատասխան

- Ինչպե՞ս է անցկացվում մոնիթորինգը և գնահատումը (մեթոդներ) – ծրագրի մոնիթորինգի և գնահատման համար կիրառվող մեթոդները պետք է սահմանվեն ըստ ծրագրի մոնիթորինգի և գնահատման պլանի, ելնելով մոնիթորինգի ենթակա գործողությունների բնույթից:

Ստորև ներկայացվում է կիրառվող հիմնական մեթոդների ցանկը.

1. ԿԾԿ ԾԻԳ-ի կողմից կազմակերպվող ստուգայցեր՝ ծրագրի իրականացման գծով առաջընթացին հետևելու, առաջացող խնդիրները և խոչընդոտները բացահայտելու և համապատասխան լուծումներ տալու նպատակով: Յուրաքանչյուր բաղադրիչի/ենթաբաղադրիչի շրջանակում իրականացվող ստուգայցերի ժամանակացույցը կսահմանվի մոնիթորինգի և գնահատման պլանի տարեկան վերանայման ընթացքում:

2. Պարբերաբար հանդիպումներ և քննարկումներ շահակիցների հետ – այս եղանակը կկիրառվի ծրագրի բոլոր բաղադրիչների և ենթաբաղադրիչների

համար՝ շահակիցների կարիքների գնահատման և նրանց հետ փոխադարձ կապի ապահովման համար՝ ինչպես իրականացման գործընթացի և վերջինիս շրջանակում փոփոխությունների կարիքի գնահատման, այնպես էլ իրականացման արդյունքների վերահսկման համար:

3. Ուսումնասիրություններ և հետազոտություններ – ուսումնասիրությունները և հետազոտությունները կիրականացվեն ծրագրի գործողությունների իրականացման համապատասխան, իսկ դրանց արդյունքները կներառվեն մոնիթորինգի և գնահատման պլանի տարեկան վերանայման ընթացքում:

4. Անհրաժեշտ տվյալների և տեղեկությունների հավաքագրում և վերլուծություն – ԿԾԿ ԾԻԳ-ը շարունակաբար կվերլուծի անհրաժեշտ տվյալները և տեղեկությունները՝ գնահատելով ծրագրի շրջանակում տեղեկատվության հավաքագրման գծով առաջընթացը և վերլուծելով տեղեկատվությունը:

5. Այլ եղանակներ, որոնք կսահմանվեն մոնիթորինգի և գնահատման պլանի տարեկան վերանայման ընթացքում:

Ծրագրի մոնիթորինգի և գնահատման արդյունքների շրջանակը ներկայացված է ծրագրի փաստաթղթերում (ծրագրի արդյունքների շրջանակ): Արդյունքների շրջանակի մասին լրացուցիչ տվյալները/ցուցիչները կներկայացվեն ծրագրի մոնիթորինգի և գնահատման պլանում:

Գնումների գործընթացի և պայմանագրերի կառավարման կազմակերպում

Նախաբան: Առաջարկվող ծրագրի գնումների գործընթացը կիրականացվի Գնումների Կանոնակարգեր Ներդրումային ծրագրերի ֆինանսավորման (IPF) վարկառուների համար թվագրված հունիս 2016, վերանայված նոյեմբեր 2017, օգոստոս 2018 և նոյեմբեր 2020, (այսուհետ կարգավորումներ) և Իրավական Համաձայնագրի դրույթներին համապատասխան: Համաշխարհային Բանկի «ՎԶՄԲ վարկերի և ՄԶԸ-ի վարկերի և դրամաշնորհների միջոցով

Ֆինանսավորվող ծրագրերում խարդախության և կոռուպցիայի կանխարգելման և դրա դեմ պայքարի ուղեցույցները», թվագրված 15 հոկտեմբերի 2006թ. և վերանայված 2011թ.-ի հունվարին և 2016թ.-ի հուլիսի 1-ին և կիրառելի կլինեն:

Գնումների գործընթացը կիրականացվի ԿԾԿ կողմից, որը իրականացրել է Կրթության և որակի համապատասխանության ծրագիրը (APL 1), Կրթության և որակի համապատասխանության երկրորդ ծրագիրը (APL 2), Կրթության բարելավման ծրագիրը և ներկայումս իրականացնում է «ԵՄ-ն հանուն նորարարության» ծրագիրը: ԿԾԿ ունի բավարար փորձ և Բանկի Կանոնակարգերի իմացություն:

1. **Ծանուցումներ և հրապարակումներ:** Գնումների ընդհանուր ծանուցումը (GPN) կիրապարակվի ՄԱԿ-ի բիզնեսի զարգացման /UN Development Business/ և Բանկի արտաքին կայքերում: Գնումների հատուկ ծանուցումները (SPN) կիրապարակվեն բոլոր Հայտերի ներկայացման Հրավերների/ RFB բաց, միջազգային, ազգային/ և պայմանագրերի համար UNDB առցանց հարթակում STEP համակարգի միջոցով, ինչպես նաև իրականացնող գործակալության կայքում:

Գնումների Պլան

Գնումների պլանը պարունակում է բոլոր գնումներին առնչվող համապատասխան տեղեկատվությունը: Ծրագրի գնումների ռազմավարական փաստաթուղթը/ԾԳՌՓ-ն/PPSD/ և գնումների պլանը ներառում են ամբողջ ծրագիրը և դրա թարմացումները կամ փոփոխությունները, և նախքան իրականացումը ենթակա են Բանկի նախնական դիտարկմանը և հաստատմանը: ԾԳՌՓ-ն և դրա թարմացումները կներբեռնվեն STEP համակարգում նախքան իրականացումը:

Խորհրդատվական ծառայություններ. Խորհրդատվական ընկերությունների կողմից մատուցվող 300,000 ԱՄՆ դոլար կամ ավելի արժողությամբ խորհրդատվական ծառայությունների գնումը կիրականացվի Որակի և գնի վրա հիմնված ընտրության (QCBS) մեթոդով: Խորհրդատվական ընկերությունների կողմից մատուցվող 300,000 ԱՄՆ դոլարից պակաս արժողությամբ խորհրդատվական ծառայությունների գնումը կարող է իրականացվել խորհրդատուի որակավորման վրա հիմնված ընտրության (CQS) մեթոդով: Անհատ խորհրդատուները կընտրվեն Կանոնակարգի՝ Անհատ խորհրդատուների համար հաստատված ընտրության մեթոդների համաձայն:

Կառավարման խորհուրդ

100,000 ԱՄՆ դոլար և ավելի արժեքով գնման գործընթացների գնահատման արդյունքները ենթակա են հաստատման Կառավարման խորհրդի կողմից: Լրացուցիչ մանրամասները ներկայացված են ստորև Գլուխ 3.2-ում:

Պայմանագրերի կառավարման կազմակերպում

Պայմանագրի հաջող կատարումն ապահովելու նպատակով համապատասխան պայմանագրերի կառավարման մեջ կներգրավվեն համապատասխան բաղադրիչի անձնակազմը՝ գնումների և ֆինանսական մասնագետների հետ միասին. մասնավորապես, պայմանագրերի շրջանակներում համապատասխան գործողությունների համակարգման, հաշվետվությունների և այլ արդյունքների ընդունման և հաստատման համար:

Կանոնակարգում նկարագրված պահանջները բավարարելու նպատակով անհրաժեշտ քայլեր պետք է իրականացվեն յուրաքանչյուր դեպքի/պայմանագրի համար: Բոլոր տեսակի փոփոխությունները կներբեռնվեն/կուղարկվեն ՀԲ՝ STEP համակարգի միջոցով՝ անկախ նախնական կամ հետդիտարկման հանգամանքից:

1. Գնման մեթոդները և քայլերը

Աշխատանքների գնում

Հայտերի ներկայացման Հրավեր (բաց, ազգային)

Աշխատանքների գնման դեպքում պետք է իրականացվեն հետևյալ քայլերը.

1. Համապատասխան աշխատանքային խմբերի անդամներով գնահատող հանձնաժողովի ստեղծում, հանձնաժողովի անդամների կողմից անաչառության և անկախության մասին հայտարարության ստորագրում:
2. Մրցութային փաստաթղթերի պատրաստում ՀԲ օրինակելի ձևերի հիման վրա՝ հաշվի առնելով, որ աշխատանքների գնման բոլոր պայմանագրերի համար կկիրառվեն հետևյալ պայմանները.
 - Կկիրառվի հայտի ապահովման հայտարարագիր,
 - Հայտերի ներկայացման ժամանակահատվածը կլինի առնվազն 28 օրացուցային օր,
 - Հայտերի վավերականության ժամկետը կլինի առնվազն 60 օրացուցային օր՝ հաշված հայտերի ներկայացման վերջնաժամկետի օրվանից:
 - Պայմանագրի կատարման ապահովումը կլինի 10%,
 - Գնի ճշգրտման դրույթները կիրառելի կլինեն միայն այն պայմանագրերի համար, որոնց ժամկետը գերազանցում է 18 ամիսը:
3. Գնումների հատուկ ծանուցման հրապարակում STEP համակարգի միջոցով և www.cfep.am կայքում, ներբեռնելով միաժամանակ մրցութային փաստաթղթերի ամբողջական փաթեթը Արմեպս և www.gnumner.am կայքերում:
4. Հայտերի բացում և Հայտերի բացման արձանագրության ներբեռնում STEP համակարգում:

5. Գնահատող հանձնաժողովի նիստերի հիման վրա համապատասխան արձանագրությունների կազմում:
6. Գնահատման հաշվետվության և պայմանագրի շնորհման առաջարկի պատրաստում՝ Համաշխարհային Բանկի գնահատման համար նախատեսված ձևաթղթի հիման վրա:
7. Գնահատման արդյունքների ներկայացում Կառավարման Խորհրդի հաստատմանը:
8. Պայմանագրի շնորհման մտադրության մասին ծանուցման ուղարկում մրցույթի բոլոր մասնակիցներին, և Հաստատման նամակի միջոցով ընտրված մասնակցի ծանուցում՝ անգործության ժամկետի ավարտից հետո:
9. Գործընթացի գաղտնիության պահպանում՝ նախքան պայմանագրի շնորհումը:
10. Պայմանագրի ստորագրում առավել շահավետ և էականորեն համապատասխանող հայտ ներկայացրած մասնակցի հետ ամենացածր գնահատված գնով /ժամանակին ստանալով բոլոր պահանջվող փաստաթղթերը/, այդ թվում՝ Պայմանագրի կատարման ապահովում, Բնապահպանական և սոցիալական պահանջների կատարման ապահովում, Կանխավճարի ապահովում/եթե պահանջվել է Կապալառուի կողմից/, Շահառուի սեփականության բացահայտման ձևաչափ և այլն./:
11. Պայմանագրի շնորհման ծանուցման հրապարակում:
12. Բոլոր փաստաթղթերի պահպանման ապահովում:
13. STEP համակարգի ժամանակին թարմացում:

Ապրանքների գնում

Հայտերի ներկայացման Հրավեր (բաց միջազգային)

Ապրանքների գնման դեպքում, հիմք ընդունելով մրցութային փաստաթղթերի օրինակների ձևերը, պետք է իրականացվեն հետևյալ քայլերը.

1. Համապատասխան աշխատանքային խմբերի անդամներով գնահատող հանձնաժողովի ստեղծում, հանձնաժողովի անդամների կողմից անաչառության և անկախության մասին հայտարարության ստորագրում:
2. Պահանջվող ապրանքների ցանկի և դրանց տեխնիկական բնութագրերի պատրաստում համապատասխան ստորաբաժանման հետ:
3. Մրցութային փաստաթղթերի պատրաստում ՀԲ օրինակելի ձևերի հիման վրա՝ հաշվի առնելով, որ սույն պարբերության մեջ նշված ապրանքների գնման բոլոր պայմանագրերի համար կկիրառվեն հետևյալ պայմանները.
 - Հայտերի ներկայացման համար սահմանվող ժամկետը կլինի առնվազն 30 աշխատանքային օր,
 - Կպահանջվի Հայտի ապահովում,
 - Հայտերի վավերականության ժամկետը կլինի առնվազն 60 օրացուցային օր:
4. Գնումների հատուկ ծանուցման հրապարակում www.cfep.am/ կայքում՝ հիմք ընդունելով Մրցութային փաստաթղթերի օրինակելի ձևերը, ինչպես նաև մրցութային փաստաթղթերի ամբողջական փաթեթի ներբեռնում STEP համակարգում և www.gnumner.am կայքում:
5. Հայտերի բացում և Հայտերի բացման նիստի արձանագրության ներբեռնում STEP համակարգում:
6. Գնահատող հանձնաժողովի նիստերի հիման վրա համապատասխան արձանագրությունների կազմում:
7. Գնահատման հաշվետվության և պայմանագրի շնորհման առաջարկի պատրաստում՝ Ապրանքների գնման համար նախատեսված գնահատման ձևաթղթի հիման վրա:
8. Մրցույթի արդյունքների ներկայացում Կառավարման խորհրդի հաստատմանը:

9. Պայմանագրի շնորհման մտադրության մասին ծանուցման ուղարկում մրցույթի բոլոր մասնակիցներին, և Հաստատման նամակի միջոցով ընտրված մասնակցի ծանուցում՝ անգործության ժամկետի ավարտից հետո:
10. Գործընթացի գաղտնիության պահպանում՝ նախքան պայմանագրի շնորհումը:
11. Պայմանագրի ստորագրում առավել շահավետ և էականորեն համապատասխանող հայտ ներկայացրած մասնակցի հետ ամենացածր գնահատված գնով /ժամանակին ստանալով բոլոր պահանջվող փաստաթղթերը/, այդ թվում՝ կանխավճարի ապահովում/եթե պահանջվել է Վաճառողի կողմից/, շահառուի սեփականության բացահայտման ձևաչափ և այլն./:
12. Պայմանագրի շնորհման ծանուցման հրապարակում:
13. Բոլոր փաստաթղթերի պահպանման ապահովում:
14. STEP համակարգի ժամանակին թարմացում:

Հայտերի ներկայացման Հրավեր (բաց, ազգային)

Ապրանքների գնման դեպքում պետք է իրականացվեն հետևյալ քայլերը.

1. Համապատասխան աշխատանքային խմբերի անդամներով գնահատող հանձնաժողովի ստեղծում, հանձնաժողովի անդամների կողմից անաչառության և անկախության մասին հայտարարության ստորագրում:
2. Պահանջվող ապրանքների ցանկի և դրանց տեխնիկական բնութագրերի պատրաստում համապատասխան ստորաբաժանման հետ:
3. Մրցութային փաստաթղթերի պատրաստում ՀԲ օրինակելի ձևերի հիման վրա՝ հաշվի առնելով, որ սույն պարբերության մեջ նշված ապրանքների գնման բոլոր պայմանագրերի համար կկիրառվեն հետևյալ պայմանները.

- Հայտերի ներկայացման համար սահմանվող ժամկետը կլինի առնվազն 28 օրացուցային օր,
 - Կպահանջվի Հայտի ապահովում,
 - Հայտերի վավերականության ժամկետը կլինի առնվազն 60 օրացուցային օր:
4. Գնումների հատուկ ծանուցման հրապարակում STEP համակարգում և www.cfep.am կայքում, ինչպես նաև մրցութային փաստաթղթերի ամբողջական փաթեթի ներբեռնում Արմեյս համակարգում and www.gnumner.am կայքում:
 5. Հայտերի բացում և Հայտերի բացման նիստի արձանագրության ներբեռնում STEP համակարգում:
 6. Գնահատող հանձնաժողովի նիստերի հիման վրա համապատասխան արձանագրությունների կազմում:
 7. Գնահատման հաշվետվության և պայմանագրի շնորհման առաջարկի պատրաստում՝ ապրանքների գնման համար նախատեսված գնահատման ձևաթղթի հիման վրա:
 8. Մրցույթի արդյունքների ներկայացում Կառավարման խորհրդի հաստատմանը:
 9. Պայմանագրի շնորհման մտադրության մասին ծանուցման ուղարկում մրցույթի բոլոր մասնակիցներին, և Հաստատման նամակի միջոցով ընտրված մասնակցի ծանուցում՝ անգործության ժամկետի ավարտից հետո:
 10. Գործընթացի գաղտնիության պահպանում՝ նախքան պայմանագրի շնորհումը:
 11. Պայմանագրի ստորագրում առավել շահավետ և էականորեն համապատասխանող հայտ ներկայացրած մասնակցի հետ ամենացածր գնահատված գնով /ժամանակին ստանալով բոլոր պահանջվող

փաստաթղթերը/, այդ թվում՝ կանխավճարի ապահովում/եթե պահանջվել է
Վաճառողի կողմից/, շահառուի սեփականության բացահայտման ձևաչափ
և այլն./:

12. Պայմանագրի շնորհման ծանուցման հրապարակում:

13. Բոլոր փաստաթղթերի պահպանման ապահովում:

14. STEP համակարգի ժամանակին թարմացում:

Գնանշման ներկայացման հրավեր(բաց, ազգային)

Ապրանքների գնման դեպքում պետք է իրականացվեն հետևյալ քայլերը.

1. Համապատասխան աշխատանքային խմբերի անդամներով գնահատող հանձնաժողովի ստեղծում, հանձնաժողովի անդամների կողմից անաչառության և անկախության մասին հայտարարության ստորագրում:
2. Պահանջվող ապրանքների ցանկի և դրանց տեխնիկական բնութագրերի պատրաստում համապատասխան ստորաբաժանման հետ:
3. Գնանշման ներկայացման հրավերի պատրաստում՝ օգտագործելով Գնանշման հրավերի օրինակելի ձևաչափի համապատասխանաբար հաստատված վերջին հրատարակությունը:
4. Հրավերի հրապարակում/գովազդում www.gnumner.am, Armepps, STEP և www.cfep.am կայքերում:
5. Գնանշումների ստացում Արմեպս համակարգի միջոցով:
6. Գնահատման իրականացում:
7. Գնահատման հաշվետվության պատրաստում՝ հիմնվելով Ապրանքների գնման Շոփինգի համար նախատեսված գնահատման օրինակելի ձևաթղթի վրա:
8. Պայմանագրի շնորհման առաջարկության պատրաստում:

9. Պայմանագրի ստորագրում նվազագույն գնահատված գին և էականորեն համապատասխանող գնանշում ներկայացրած կազմակերպության հետ:
10. Գործընթացի գաղտնիության պահպանում՝ նախքան պայմանագրի շնորհումը:
11. Պայմանագրի շնորհման ծանուցման հրապարակում:
12. Բոլոր փաստաթղթերի պահպանման ապահովում:
13. STEP համակարգի ժամանակին թարմացում:

Գնանշման ներկայացման հրավեր(սահմանափակ, ազգային)

Ապրանքների գնման դեպքում պետք է իրականացվեն հետևյալ քայլերը.

1. Համապատասխան աշխատանքային խմբերի անդամներով գնահատող հանձնաժողովի ստեղծում, հանձնաժողովի անդամների կողմից անաչառության և անկախության մասին հայտարարության ստորագրում:
2. Պահանջվող ապրանքների ցանկի և դրանց տեխնիկական բնութագրերի պատրաստում համապատասխան ստորաբաժանման հետ:
3. Մատակարարների ցանկի պատրաստում բավականաչափ լայն՝ ըստ պահանջի արդյունավետ մրցակցություն ապահովելու նպատակով: Նման ցուցակը կազմվում է նախկին փորձի և/կամ շուկայի ուսումնասիրությունների հիման վրա: Մատակարարների ցանկի պատրաստման համար պատասխանատու կլինի գնումների մասնագետը՝ համագործակցելով համապատասխան ստորաբաժանման մասնագետի հետ:
4. Գնանշման ներկայացման հրավերի պատրաստում՝ օգտագործելով Գնանշման հրավերի օրինակելի ձևաչափի համապատասխանաբար հաստատված վերջին հրատարակությունը:
5. Գնանշման ներկայացման Հրավերի ուղարկում մասնակիցներին Արմեպս համակարգի միջոցով:

6. Նախքան վերջնաժամկետը գնանշումների ստացում և գնահատում:
7. Գնումների մասնագետի կողմից Գնահատման հաշվետվության պատրաստում՝ հիմնվելով Ապրանքների գնման Շոփինգի համար նախատեսված գնահատման օրինակելի ձևաթղթի վրա:
8. Պայմանագրի շնորհման առաջարկության պատրաստում:
9. Գործընթացի գաղտնիության պահպանում՝ նախքան պայմանագրի շնորհումը:
10. Պայմանագրի ստորագրում նվազագույն գնահատված գին և էականորեն համապատասխանող գնանշում ներկայացրած կազմակերպության հետ:
11. Պայմանագրի շնորհման ծանուցման հրապարակում:
12. Բոլոր փաստաթղթերի պահպանման ապահովում:
13. STEP համակարգի ժամանակին թարմացում:

Ուղիղ գնում

Ապրանքների գնման դեպքում պետք է իրականացվեն հետևյալ քայլերը.

1. Ուղիղ գնման համար համապատասխան հիմնավորման պատրաստում և ուղիղ պայմանագրի կնքման հարցման ներկայացում Բանկ՝ հաստատում ստանալու նպատակով:
2. Վաճառողի հետ պայմանագրի պայմանների համաձայնեցում:
3. Համոզվածություն, որ ուղղակի պայմանագրով նախատեսված գները առնվազն նույնն են, ինչ մատակարարը կիառում է իր մյուս հաճախորդների համար:
4. Գործընթացի գաղտնիության պահպանում՝ նախքան պայմանագրի շնորհումը:
5. Պայմանագրի ստորագրում:

6. Պայմանագրի շնորհման ծանուցման հրապարակում:
7. Բոլոր փաստաթղթերի պահպանման ապահովում:
8. STEP համակարգի ժամանակին թարմացում:

Խորհրդատուների ընտրություն

Կազմակերպությունների ընտրություն

Խորհրդատուների ընտրություն Որակի և գնի վրա հիմնված ընտրության(QCBS) /Նվազագույն գնի ընտրության(LCS) մեթոդով

Որակի և գնի վրա հիմնված ընտրության(QCBS) և Նվազագույն գնի ընտրության(LCS) մեթոդով կազմակերպությունների ընտրության դեպքում պետք է իրականացվեն հետևյալ քայլերը.

1. Գնահատող հանձնաժողովի ստեղծում՝ կազմված առնվազն 3, բայց ոչ ավելի քան 5 անդամներից, հանձնաժողովի անդամների կողմից անաչառության և անկախության մասին հայտարարության ստորագրում:
2. Տեխնիկական բնութագրի (TOR) և բյուջեի նախահաշվի կազմում՝ ըստ մարդ/օրերի (շաբաթներ, ամիսներ, ինչ որ կիրառելի է), առաջադրանքի տևողության և այլն:
3. Գնահատման չափանիշների սահմանում:
4. STEP համակարգի միջոցով տեխնիկական բնութագրի ուղարկում/ներկայացում Համաշխարհային Բանկի հաստատմանը:
5. Հետաքրքրության հայտերի և խորհրդատուի որակավորման և առաջադրանքին համապատասխանության վերաբերյալ տեղեկատվության հարցում՝ համապատասխան կայքերում հայտարարության տեղադրման և մասնագիտական ասոցացիաների շրջանում առաջադրանքի մասին տեղեկատվության տարածման միջոցով և այլն:

6. Կարճ ցուցակում ընդգրկված ընկերությունների ցանկի կազմում՝ հիմնվելով առաջադրանքի հետ կապված խորհրդատուների որակավորման, փորձի և համապատասխանության վերաբերյալ տեղեկատվության վրա:
7. Առաջարկների ներկայացման Հրավերի նախագծի պատրաստում, ներառյալ՝ խորհրդատուների կարճ ցուցակը:
8. Առաջարկների ներկայացման Հրավերի ուղարկում կարճ ցուցակում ընդգրկված ընկերություններին:
9. Տեխնիկական և ֆինանսական առաջարկների ստացում:
10. Տեխնիկական առաջարկների բացում և գնահատում՝ փակ և պաշտպանված պահելով ֆինանսական առաջարկները:
11. Տեխնիկական գնահատման հաշվետվության պատրաստում:
12. Ընկերություններին իրենց տեխնիկական գնահատականների և ֆինանսական առաջարկների բացման օրվա մասին տեղեկացում:
13. Ֆինանսական առաջարկների բացում:
14. Համակցված տեխնիկական և ֆինանսական գնահատման (վերջնական) հաշվետվության և պայմանագրի կնքման առաջարկի պատրաստում:
15. Ընտրված ընկերության հետ պայմանագրային բանակցությունների անցկացում:
16. Եթե ընդունելի պայմանագրի վերաբերյալ բանակցությունները ձախողվում են, տվյալ ընկերության հետ բանակցությունները դադարեցվում են՝ առաջարկելով բանակցություններ հաջորդ ամենաբարձր գնահատված ընկերության հետ: Եթե պայմանագիրը հանդիսանում է Բանկի նախնական դիտարկման առարկա, ապա նախքան բանակցությունների դադարեցումը և դրանց վերսկսումը երկրորդ տեղ զբաղեցրած մասնակցի հետ, անհրաժեշտ է ստանալ Բանկի հաստատումը:

9. Գործընթացի գաղտնիության պահպանում՝ նախքան պայմանագրի շնորհումը:
17. Պայմանագրի շնորհման մտադրության մասին ծանուցման ուղարկում առաջարկներ ներկայացրած բոլոր Խորհրդատուներին և անգործության ժամկետի պահպանում:
18. Պայմանագրի կնքում՝ նկատի ունենալով, որ 100,000 ԱՄՆ դոլարը գերազանցող պայմանագրերի համար Կառավարման խորհրդի հաստատումը պարտադիր է, նախքան պայմանագրի կնքումը:
19. Պայմանագրի շնորհման ծանուցման հրապարակում:
20. Բոլոր փաստաթղթերի պահպանման ապահովում:
21. STEP համակարգի ժամանակին թարմացում:

Խորհրդատուի որակավորման վրա հիմնված ընտրություն (CQS)

Ընտրության այս մեթոդի դեպքում պետք է իրականացվեն հետևյալ քայլերը:

1. Գնահատող հանձնաժողովի ստեղծում՝ կազմված առնվազն 3, բայց ոչ ավելի քան 5 անդամներից, հանձնաժողովի անդամների կողմից անաչառության և անկախության մասին հայտարարության ստորագրում:
2. Տեխնիկական բնութագրի (TOR) և բյուջեի նախահաշվի կազմում՝ ըստ մարդ/օրերի (շաբաթներ, ամիսներ, ինչ որ կիրառելի է), առաջադրանքի տևողության և այլն:
3. STEP համակարգի միջոցով տեխնիկական բնութագրի ուղարկում/ներկայացում ՀԲ:
4. Որակավորման գնահատման չափանիշների սահմանում:
5. Հետաքրքրության հայտերի և խորհրդատուի որակավորման և առաջադրանքին համապատասխանության վերաբերյալ տեղեկատվության հարցում՝ համապատասխան կայքերում հայտարարության տեղադրման,

STEP համակարգի և մասնագիտական աստղագիաների շրջանում առաջադրանքի մասին տեղեկատվության տարածման միջոցով և այլն:

6. Կարճ ցուցակում ընդգրկված ընկերությունների ցանկի կազմում՝ հիմնվելով առաջադրանքի հետ կապված խորհրդատուների որակավորման, փորձի և համապատասխանության վերաբերյալ տեղեկատվության վրա,
7. Գնահատման հաշվետվության պատրաստում:
8. Առաջարկ ներկայացնելու Հրավերի ուղարկում լավագույն որակավորումը և համապատասխան փորձառությունը ունեցող ընկերությանը, տեխնիկական և ֆինանսական առաջարկի ներկայացում:
9. Տեխնիկական և ֆինանսական առաջարկների հիման վրա պայմանագրի պայմանների բանակցում և անհրաժեշտության դեպքում փոփոխությունների առաջարկում:
10. Պայմանագրի կնքում՝ նկատի ունենալով, որ 100,000 ԱՄՆ դոլարը գերազանցող պայմանագրերի համար Կառավարման խորհրդի հաստատումը պարտադիր է, նախքան պայմանագրի կնքումը:
11. Գործընթացի գաղտնիության պահպանում՝ նախքան պայմանագրի շնորհումը:
12. Պայմանագրի շնորհման ծանուցման հրապարակում:
13. Բոլոր փաստաթղթերի պահպանման ապահովում:
14. STEP համակարգի ժամանակին թարմացում:

Եթե ընդունելի պայմանագրի վերաբերյալ բանակցությունները ձախողվում են, տվյալ ընկերության հետ բանակցությունները դադարեցվում են՝ առաջարկելով բանակցություններ հաջորդ ամենաբարձր գնահատված ընկերության հետ:

Ուղիղ Ընտրություն

Ուղիղ ընտրության դեպքում կիրառվում են հետևյալ քայլերը.

1. Առաջադրանքի համար տեխնիկական բնութագրի/ TOR/ կազմում:
2. Ուղիղ ընտրության համար հիմնավորման պատրաստում:
3. Խորհրդատուի հետ պայմանագրի պայմանների համաձայնեցում:
4. Ուղիղ ընտրության վերաբերյալ ՀԲ հաստատման ստացում և պայմանագրի նախագծի ներբեռնում STEP համակարգում:
5. Գործընթացի գաղտնիության պահպանում՝ նախքան պայմանագրի շնորհումը:
6. Պայմանագրի ստորագրում:
7. Պայմանագրի շնորհման ծանուցման հրապարակում:
8. Բոլոր փաստաթղթերի պահպանման ապահովում:
9. STEP համակարգի ժամանակին թարմացում:

Անհատ Խորհրդատուների ընտրություն (IC)

Անհատ Խորհրդատուները ընտրվում են՝ ելնելով առաջադրանքի համար նրանց որակավորուման համապատասխանությունից: Անհատական Խորհրդատու ընտրվում է առնվազն երեք թեկնածուների համեմատությամբ, որոնց որակավորումները համապատասխանում են նվազագույն չափանիշներին:

Անհատ Խորհրդատուի ընտրության դեպքում իրականացվում են հետևյալ քայլերը.

1. Գնահատող հանձնաժողովի ստեղծում՝ կազմված առնվազն 3, բայց ոչ ավելի քան 5 անդամներից, հանձնաժողովի անդամների կողմից անաչառության և անկախության մասին հայտարարության ստորագրում:
2. Տեխնիկական բնութագրի (TOR) և բյուջեի նախահաշվի կազմում՝ ըստ մարդ/օրերի (շաբաթներ, ամիսներ, ինչ որ կիրառելի է), առաջադրանքի տևողության և այլն:
3. STEP համակարգի միջոցով տեխնիկական բնութագրի ուղարկում/ներկայացում ՀԲ:

4. Որակավորման գնահատման չափանիշների սահմանում:
5. Ստացված հետաքրքրության հայտերի (և լրացուցիչ տեղեկատվության /պարզաբանումների) հիման վրա որակավորված թեկնածուների կարճ ցուցակի կազմում:
6. Ինքնակենսագրականների գնահատում:
7. Գնահատման հաշվետվության պատրաստում:
8. Ամենաբարձր գնահատված Խորհրդատուի հետ պայմանագրի բանակցում:
9. Գործընթացի գաղտնիության պահպանում՝ նախքան պայմանագրի շնորհումը:
10. Պայմանագրի ստորագրում:
11. Պայմանագրի շնորհման ծանուցման հրապարակում:
12. Բոլոր փաստաթղթերի պահպանման ապահովում:
13. STEP համակարգի ժամանակին թարմացում:

Ուղիղ ընտրություն

Ուղիղ ընտրության դեպքում կիրառվում են հետևյալ քայլերը.

1. Առաջադրանքի համար տեխնիկական բնութագրի/ TOR/ կազմում:
2. Խորհրդատուի հետ պայմանագրի պայմանների համաձայնեցում:
3. Ուղիղ ընտրության վերաբերյալ ՀԲ հաստատման ստացում և պայմանագրի նախագծի ներբեռնում STEP համակարգում:
4. Գործընթացի գաղտնիության պահպանում՝ նախքան պայմանագրի շնորհումը:
5. Պայմանագրի ստորագրում:
6. Պայմանագրի շնորհման ծանուցման հրապարակում:

7. Բոլոր փաստաթղթերի պահպանման ապահովում:
8. STEP համակարգի ժամանակին թարմացում:

Ծրագրի իրազեկման բարձրացմանն ուղղված միջոցառումներ

Կրթության հետ կապված խնդիրները, մասնավորապես՝ կրթության ոլորտում բարեփոխումների, կրթական համակարգի տարբեր մակարդակներում կրթության զարգացման և կատարելագործման անհրաժեշտությունը շոշափում են բնակչության գրեթե բոլոր տարիքային և սոցիալական խմբերի շահերը, հետևաբար՝ լրացուցիչ ֆինանսավորմամբ իրականացվող «Կրթության բարելավում» ծրագրի գործունեության վերաբերյալ հանրային իրազեկվածության բարձրացմանն ուղղված միջոցառումները պետք է իրականացվեն հետևողականորեն: Ամեն տարի Կրթական ծրագրերի կենտրոն ԾԻԳ-ը տարեկան կտրվածքով (յուրաքանչյուր օրացուցային տարվա համար) հաղորդակցության պլան կմշակի ծրագրի տևողության ողջ ընթացքում հանրությանը ներկայացվելիք հիմնական ռազմավարական խնդիրների սահմանումներով, իրականացվելիք հրապարակային գործողություններով և քննարկվելիք թեմաներով: Ըստ դրա՝ ԿԾԿ ԾԻԳ-ը կկազմակերպի ծրագրի իրազեկման բարձրացմանն ուղղված աշխատանքները: Կրթական ծրագրերի կենտրոն ԾԻԳ-ը, ըստ պլանի, կկազմակերպի և կաջակցի նաև տեղեկատվության տարածմանը՝ զանգվածային լրատվության միջոցների, հրապարակումների, սեմինարների և հանրային քննարկումների միջոցով, ինչը պետք է ռացիոնալ հետաքրքրություն առաջացնի ծրագրի նկատմամբ, նպաստի դրա նպատակների ընկալմանը, ինչպես նաև հետադարձ կապի համակարգի ստեղծմանը: Բաղադրիչի/ենթաբաղադրիչների ղեկավարները պատասխանատու կլինեն յուրաքանչյուր բաղադրիչի կողմից հետագա հաշվետվությունների համար հաղորդակցության գործունեության վերաբերյալ տվյալների հավաքագրման, մշակման և մշտադիտարկման համար:

Ընտրված խորհրդատուն ԿԾԿ ԾԻԳ-ին կաջակցի իրազեկման միջոցառումների իրականացման գործում և կհամակարգի ծրագրի իրազեկման բարձրացմանն ուղղված արշավը: Ծրագրի իրազեկման բարձրացմանն ուղղված արշավի նպատակն է առավելագույնի հասցնել ծրագրի տեսանելիությունը, հիմնական ուղերձը և ազդեցությունը: Իրազեկման բարձրացմանն ուղղված արշավի առաջնային նպատակը ներգրավված շահագրգիռ կողմերի տեղեկացվածության բարձրացումն է: Իրազեկման բարձրացմանն ուղղված արշավի նախնական քայլերն ուղղված են «հետաքրքրությունների համայնք ստեղծելուն», թիրախային խմբերի և շահագրգիռ կողմերի ներգրավմանը: ԿԾԿ ԾԻԳ-ի շրջանակում գործողությունների արդյունավետ իրականացումն ապահովելու համար պետք է մշակվի հանրային իրազեկման ծրագիր, որը կներառի հետևյալ միջոցառումները՝

1. Շահառուների հետ աշխատանքներ ներառյալ՝

«Կրթության բարելավման ծրագրի լրացուցիչ ֆինանսավորում» վարկային ծրագրին առնչվող հիմնական թեմաների վերաբերյալ տեղեկատվության պատրաստում և տրամադրում զանգվածային լրատվության միջոցներին:

- Կլոր-սեղանների կազմակերպում «Կրթության բարելավման ծրագրի լրացուցիչ ֆինանսավորում» վարկային ծրագրի բաղադրիչները հասարակությանը ներկայացնելու համար:


- Նախադպրոցական դրամաշնորհային ծրագրերին համայնքների մասնակցությանը նպաստելու նպատակով ՀՀ մարզերում խթանման աշխատանքների իրականացում:

- Բուհերում իրազեկման արշավների իրականացում ՆԱՀ ծրագրերին մասնակցության խթանման նպատակով:

2. Համագործակցություն «Կրթության բարելավման ծրագրի լրացուցիչ ֆինանսավորում» վարկային ծրագրի գործունեության մեջ ներգրավված կազմակերպությունների ներկայացուցիչների հետ, ներառյալ.

- Սեմինարների կազմակերպում պետական կառավարման մարմինների, ծրագրերի իրականացման մեջ ներգրավված պետական կառույցների, ՀԿ-ների և մասնավոր կազմակերպությունների համար:
- Ծրագրին առնչվող մեթոդական և այլ ձեռնարկների պատրաստում ու տարածում:

Այս համատեքստում ծրագրի իրագրեկմանն ուղղված արշավի ռազմավարությունը պետք է ներառի ոչ թվային և թվային հաղորդակցության հետևյալ ուղիները, ինչպիսիք են (տե՛ս ստորև նկարը),



Կրթական ծրագրերի կենտրոն ԾԻԳ-ի պաշտոնական կայք

«Կրթության բարելավման ծրագրի լրացուցիչ ֆինանսավորում» վարկային ծրագրի մասին ամբողջական տեղեկատվությունը, հայտարարությունները, իրադարձությունները կտեղադրվեն www.cfep.am կայքում, որը պարբերաբար կթարմացվի: Կայքը կապահովի հասարակության հետ հետադարձ կապը:

Տպագիր մամուլ

Տպագիր մամուլի (առցանց և տպագիր մամուլ) միջոցով տեղեկատվություն կտրամադրվի մեծ լսարանին: Տպագիր մամուլի միջոցով իրականացվող արշավները նպատակ ունեն բարձրացնել ծրագրի տեսանելիությունը, ազդեցություն ունենալ մոտեցումների և համոզմունքների վրա:

Էլեկտրոնային լրատվամիջոցներ

Էլեկտրոնային լրատվամիջոցները թույլ են տալիս կիսվել տեղեկատվությամբ ցանկացած էլեկտրոնային սարքի վրա՝ հանդիսատեսի դիտման համար: Ի տարբերություն ստատիկ (տպագիր) լրատվամիջոցների, էլեկտրոնային լրատվամիջոցները հեռարձակվում են հասարակության ավելի լայն շերտերի համար: Էլեկտրոնային լրատվամիջոցների օրինակներ են հեռուստատեսությունը, ռադիոն կամ ինտերնետը: Էլեկտրոնային հաղորդակցությունը թույլ է տալիս մեկ հաղորդագրության մեջ միավորել բազմաթիվ լրատվամիջոցներ՝ տեքստ, գրաֆիկական ձայն, տեսանյութ և այլն: Դրա արդյունքում մենք ունենում ենք կոնկրետ լսարանին հարմարեցված շատ ավելի բովանդակալից հաղորդումներ:

Ուղիղ (չմիջնորդավորված) միջոցներ

Դեմ առ դեմ միջոցառումները կարևոր գործիք կարող են լինել ծրագրի մասին տեղեկատվության և կրթական խնդիրների վերաբերյալ համապատասխան գիտելիքներ փոխանցելու համար, բացի դրանից՝ կարող են ստեղծել ինտերակտիվ հնարավորություններ տարբեր ոլորտների՝ միմյանց հետ փոխգործակցության համար՝ հաշվի առնելով կրթության կառավարման մասնակցային և ինտեգրված մոտեցումը:

Ուղիղ (չմիջնորդավորված) միջոցներ են՝ դեմ առ դեմ հանդիպումները, վերապատրաստումները, աշխատաժողովները, մարդկանց միջոցով իրար տեղեկատվության փոխանցումը:

Վերոնշյալ գործողությունները պետք է իրականացվեն հետևողականորեն՝ ապահովելով հանրային իրազեկում ծրագրի իրականացման ողջ ընթացքում:

Հաղորդակցության արդյունավետության առումով, հաղորդակցության հետևողական ռազմավարություն ունենալը կարևոր է, ինչը թույլ կտա ուշադրության կենտրոնում պահել սույն ձեռնարկում նկարագրված ծրագրի հիմնական ուղղությունները:

Սոցիալական ցանցեր

Սոցիալական մեդիան առցանց հաղորդակցության ուղի է՝ կառուցված համայնքի վրա հիմնված տվյալների, փոխազդեցության, բովանդակության փոխանակման և համագործակցության վրա: Ավելի քան 2,60 միլիարդ օգտատեր ունեցող «Facebook» սոցիալական ցանցը կազմված է ժողովրդագրական տվյալների ամենամեծ խառնուրդից: Այն հիանալի միջոց է ամբողջ աշխարհում թիրախային որևէ խմբի հասնելու համար: Սոցիալական միջոցների դերը մեծանում է, և շարունակում առանցքային դեր կատարել իրազեկման բարձրացման գործում: Սոցիալական մեդիայի («Facebook»-ի) միջոցով իրազեկման բարձրացմանն ուղղված արշավը կարող է լինել և՛ արդյունավետ, և՛ խմբավորման հիանալի գործիք՝ տեղեկատվությունն արագ կիսելու, տարածելու և համայնք կառուցելու տեսանկյունից: Հնարավորություններն անվերջ են:

Գործընկերության հնարավորություններ (համագործակցություն)

Լրացուցիչ ֆինանսավորմամբ շարունակելու է նախորդ ծրագրերի շրջանակում հաստատած արդյունավետ աշխատանքային հարաբերությունները:

ԿԲԾ-ի շրջանակում արդյունավետ համագործակցություն է հաստատվել Կրթության ազգային ինստիտուտի, Երևանի Խաչատուր Աբովյանի անվան պետական մանկավարժական համալսարանի հետ (նախադպրոցական հաստատությունների ուսուցիչների վերապատրաստում):

ԿԲԾ-ի շրջանակում վերապատրաստումներ իրականացնող կազմակերպությունը ընտրվել է ուղիղ ընտրության եղանակով: Պայմանագրի երկու կողմեր են հանդիսացել կրթական հաստատությունը և ընտրված կազմակերպությունը:

«Կրթության բարելավման ծրագրի լրացուցիչ ֆինանսավորում» վարկային ծրագրի իրականացման ընթացքում վերապատրաստումներ իրականացնող կազմակերպությունը կընտրվի մրցույթային եղանակով, հետևաբար պայմանագրի երկու կողմերը կհանդիսանան ընտրված կազմակերպությունն ու ԿԾԿ ԾԻԳ-ը, որն էլ կհամակարգի դաստիարակների վերապատրաստումների իրականացման ողջ գործընթացը:

«Կրթության բարելավման ծրագրի լրացուցիչ ֆինանսավորում» վարկային ծրագրի շրջանակում հնարավոր է համագործակցությունը հետևյալ գործընկեր կազմակերպությունների հետ.

- Նախակրթարանների դաստիարակների և կրթական հաստատությունների տնօրենների վերապատրաստումների իրականացման մասով հնարավոր է համագործակցությունը Խ. Աբովյանի անվան պետական մանկավարժական համալսարանի, ՅՈՒՆԻՍԵՖ-ի և ոլորտի այլ կազմակերպությունների հետ: Աղետների ռիսկերի կառավարման և կանխարգելման հետ կապված՝ տնօրենների վերապատրաստման գործընթացին (ներառյալ այնպիսի գործողություններ, ինչպիսիք են երկրաշարժերի դեպքում վարժանքները կամ կլիմայի հետ կապված արտակարգ իրավիճակների արձագանքման դասընթացները), հնարավոր է Արտակարգ իրավիճակների նախարարության (ԱԻՆ) ներգրավումը:
- Նախատեսվում է համագործակցություն ՄԱԿ-ի զարգացման ծրագրի (ՄԱՀԾ) հետ՝ նախադպրոցական ուսումնական հաստատությունների վերանորոգման և ավագ դպրոցների հիմնանորոգման ժամանակ էներգախնայող սարքավորումների տրամադրման եղանակով (մինչև 20% համաֆինանսավորմամբ):

Ընդհանրապես «Կրթության բարելավում» ծրագրի իրականացման սկզբունքներից է սերտ համագործակցություն հաստատել կրթության ոլորտում ծրագրեր իրականացնող միջազգային և հասարակական կազմակերպությունների հետ: Կապված բովանդակության և առաջադրանքների հետ՝ լրացուցիչ

Ֆինանսավորմամբ համագործակցությունը քաղաքացիական հասարակության և տեղական գործընկերների հետ կարող է ընդգրկել հետևյալը.

- քաղաքացիական հասարակության և տեղական գործընկերների հետ համագործակցության շրջանակներում վերջիններս կարող են ներգրավվել ծրագրերի իրականացման մեջ՝ որպես որոշակի միջոցառումներին մասնակից պատասխանատու կողմ, որպես աջակցող կողմ (լինել պայմանագրային հարաբերությունների մեջ որպես իրականացնող կամ որպես մատակարար),
- հնարավորության դեպքում քաղաքացիական հասարակությունը և տեղական գործընկերները կարող են ներգրավվել ծրագրում՝ աջակցելով բարելավել ծրագրի արդյունքների որակը տեղական նախաձեռնությունների միջոցով՝ աջակցելով թիրախային շահառուներին, քանի որ ծրագիրը միտված է ազգային և պետական խնդիրների լուծմանը:

Բնապահպանական և սոցիալական կառավարում

ՀԲ-ի անվտանգության քաղաքականությունները կիրառվում են ՀԲ-ի վարկային միջոցներով ֆինանսավորվող բոլոր ծրագրերում, և կարևորվում են այս ծրագրերի բնապահպանական և սոցիալական հնարավոր անբարենպաստ ազդեցությունների բացահայտման, դրանցից խուսափման, նվազեցման, մեղմացման և փոխհատուցման տեսանկյունից: «Կրթության բարելավում» ծրագիրը ընդգրկում է ՀԲ-ի երկու անվտանգության քաղաքականություն. թիվ 4.01 «Բնապահպանական գնահատում» Գործառնական քաղաքականությունը (ԳԲ) և ԳԲ 4.11 «Մշակութային ֆիզիկական ռեսուրսների պահպանություն»: Համաձայն ՀԲ ԳԲ 4.01-ի՝ վերոնշյալ ծրագիրը դասվում է բնապահպանական Բ կատեգորիային, ինչը նշանակում է, որ ծրագրի շրջանակում բնապահպանական Ա կատեգորիային դասվող ոչ մի առանձին ներդրում չի ֆինանսավորվի: Թեև ծրագիրը չի ընդգրկում ՀԲ ԳԲ 4.12 «Հարկադիր վերաբնակեցում», վերջինս էական ԳԲ է և ընդգրկում է ֆիզիկական վերաբնակեցում և հողի կորուստ, որը բերում է՝ (1) տեղահանմանը կամ բնակության վայրի կորստին, (2) գույքի կամ

դրա մատչելիության կորստին, (3) եկամուտի աղբյուրների կորստին՝ անկախ ազդեցությունը կրող մարդկանց վերաբնակեցնելու անհրաժեշտությունից:

Սույն ծրագրի շրջանակում իրականացվող շինարարական աշխատանքների համար կպահանջվի (1) բնապահպանական ստուգում՝ երաշխավորելու համար, որ յուրաքանչյուր առանձին ներդրում նույնպես պատկանում է Բ կատեգորիային և (2) բնապահպանական կառավարման պլանավորում կոնկրետ տեղամասերի համար, ինչպես նաև բացասական ազդեցությունները մեղմացնող և կանխարգելող միջոցառումների տրամադրում և այդ միջոցառումների մոնիթորինգի մեխանիզմի ստեղծում: Դպրոցները, որոնք առաջարկվել են ծրագրի շրջանակում վերանորոգման համար, պետք է ստուգվեն նաև ՀՀ մշակութային ժառանգության ցուցակներում, այն դեպքերում, երբ նրանցից ինչ-որ մեկը կունենա պատմական նշանակություն, ապա վերջինիս պահպանությունը պետք է իրականացվի ՀԲ ԳՔ 4.11-ի:

Ծրագրի նախապատրաստման ժամանակ մշակվել է Բնապահպանական և սոցիալական կառավարման շրջանակային փաստաթուղթը (ԲՍԿՇՓ), որը ներկայացված է սույն ձեռնարկի Հավելված 4-ում: ԲՍԿՇՓ-ն «Կրթության բարելավում» ծրագրի պատշաճ բնապահպանական մոտեցումների կիրառման ընդհանուր ուղեցույց է: Մասնավորապես ԲՍԿՇՓ-ն տրամադրում է. 1) առկա նախնական տեղեկատվությունը, 2) ծրագրի իրականացման համար անհրաժեշտ իրավական փաստաթղթերը և ինստիտուցիոնալ շրջանակը, 3) շինարարական աշխատանքներից բխող շրջակա միջավայրի և սոցիալական ռիսկերի գնահատումը, որքանով որ դա հնարավոր կլինի այդ պահին, 4) ռիսկերի մեղմացման միջոցառումների ընդհանուր շարք, որոնք կարող են կիրառվել ծրագրից բխող շրջակա միջավայրի և սոցիալական ռիսկերի նկատմամբ, 5) յուրաքանչյուր դպրոցի շենքի բնապահպանական կառավարման պլանի համար անհրաժեշտ լրացուցիչ տեղեկատվության նկարագրությունը և 6) Բնապահպանական և սոցիալական կառավարման պլանների (ԲՍԿՊ) իրականացման համար ինստիտուցիոնալ պայմանավորվածությունները:

ԲԿՍՇՓ-ի համաձայն՝ ծրագրի շրջանակում իրականացվող ցանկացած տիպի ֆիզիկական աշխատանքի համար պետք է մշակվեն ԲՍԿՊ-ներ՝ ըստ ցածր ռիսկայնությամբ շինարարական/վերակառուցման աշխատանքների համար կիրառելի ձևաչափի: Այսպիսի ձևաչափով ստուգաթերթիկ ԲՍԿՊ ներառված է ԲԿՍՇՓ-ում: ԲՍԿՊ-ները նաև պետք է համապատասխանեն ՀՀ օրենսդրության պահանջներին: ԲՍԿՊ-ները կանդրադառնան տվյալ տեղանքում վերակառուցման աշխատանքների իրականացման հետ կապված բնապահպանական ռիսկերին, կառաջարկեն համապատասխան մեղմացման միջոցառումներ և կներկայացնեն մեղմացման պլանների իրականացումը վերահսկելու համար մշակված մոնիթորինգի սխեմաները: ԲՍԿՊ նախագծերը կներկայացվեն հանրությանը և ծրագրի իրականացման հետ կապված բնապահպանական և սոցիալական խնդիրները կքննարկվեն ծրագրի հնարավոր շահառուների հետ՝ մինչև շինարարական աշխատանքների մրցույթի իրականացումը յուրաքանչյուր բաղադրիչի համար: Վերջնական ԲՍԿՊ-ները կներառվեն շինարարական աշխատանքների մրցութային փաստաթղթերում այնպես, որ հնարավոր դիմողները կարողանան ներառել ԲՍԿՊ իրականացման ծախսերն իրենց առաջարկներում: Հետագա փուլերում ԲՍԿՊ-ները կներառվեն շինարարական աշխատանքների պայմանագրերում և դրանց իրականացումը, որպես պայմանագրային պայման, կլինի պարտադիր: Շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում համապատասխանությունը ԲԿՊ-ների պահանջներին հնարավորություն կտա կանխարգելելու կամ նվազագույնի հասցնելու հնարավոր անբարենպաստ ազդեցությունները և բավարար կլինի ծրագրի բնապահպանական ազդեցությունները թույլատրելի նվազագույն մակարդակի վրա պահելու համար:

Անվտանգության համապատասխանության վերահսկման համար պատասխանատու է Ենթաբաղադրիչ 1.2-ի ղեկավարը՝ ծրագրերի ղեկավարի վերահսկողության ներքո: Բացի դրանից՝ պայմանագիր կկնքվի բնապահպանական մասնագետի հետ, որը կաջակցի ենթաբաղադրիչի

ղեկավարին և ծրագրերի ղեկավարին: Բնապահպանական մասնագետը կմշակի մոնիթորինգի պլան՝ կախված շինարարության ժամանակացույցից և այցերի գրաֆիկից: Բնապահպանական մասնագետը յուրաքանչյուր այցի ժամանակ կլրացնի բնապահպանական մոնիթորինգի ստուգաթերթիկը՝ օգտվելով ԲԿՍՇՓ-ում տրված ձևաչափից և ստեղծի լուսանկարներով փաստաթղթեր: Ստուգաթերթիկները պետք է հավաքվեն և պահպանվեն, ըստ պատշաճի, որոնք կտրամադրվեն ԿԾԿ կառավարման նպատակով և ՀԲ՝ ըստ պահանջի:

ԲՍԿՊ մոնիթորինգի արդյունքում ստացված տեղեկատվությունը կօգտագործվի ծրագրի կառավարման գործընթացում: Մասնավորապես, ԲՍԿՊ-ների հետ անհամապատասխանության դեպքեր բացահայտելիս և/կամ որևէ տեղանքում շրջակա միջավայրի վնասելու դեպք հայտնաբերելիս պետք է մշակվի ուղղիչ գործողությունների պլան, հետևել գործողությունների իրականացմանը և, անհրաժեշտության դեպքում, ներկայացված հիմնանորոգման նախագծերում կատարել հնարավոր փոփոխություններ:

ԲՍԿՊ իրականացման և մոնիթորինգի գործում տարբեր կազմակերպությունների պատասխանատվությունները հակիրճ ամփոփված են սույն Գործառնական ձեռնարկի հավելված 5 «Բնապահպանական և սոցիալական կառավարման շրջանակային» փաստաթղթի «Ենթածրագրի հատուկ շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատումը և կառավարման պլանավորումը» 9-րդ բաժնում:

Բաժին 3.2 Ծրագրի ղեկավարում

Ծրագիրն ունի կառավարման խորհուրդ (այսուհետև ԿԽ), որը պատասխանատու է ծրագրի կառավարման համար:

Ծրագրի կառավարման խորհուրդ (ԾԿԽ)

Ծրագրի կառավարման խորհրդի անհատական կազմը հաստատվել է ՀՀ ԿԳՄՍ նախարարի 31.01.2022 թ. թիվ 127-Ա/2 հրամանով: Ներկայումս այն բաղկացած է 7 անձից: ԿԽ-ի անդամներն են. ՀՀ ԿԳՄՍ նախարարը, ԿԳՄՍ նախարարի երկու տեղակալները, ՀՀ ԿԳՄՍ նախարարի խորհրդականը, ՀՀ ԿԳՄՍՆ

հանրակրթության վարչության պետը, ԿԶՆԱԿ-ի և «Հայաստան» համահայկական հիմնադրամի գործադիր տնօրենները՝ համատեղ համաձայնությամբ:

ԿԽ-ի աշխատակարգի համաձայն՝ ԿԽ-ը նախագահում է ՀՀ ԿԳՄՍ նախարարը:

ԿԽ -ի խնդիրներն են.

- վերահսկել ԿԾԿ-ի աշխատանքները,
- վերահսկել ծրագրի նախապատրաստման միջոցները նախապատրաստման փուլում, իսկ դրամաշնորհային և վարկային ծրագրերի շրջանակում իրականացվող ծախսերը՝ համապատասխանաբար ծրագրի իրականացման ընթացքում,
- ուսումնասիրել և հաստատել ծրագրի տարեկան ժամանակացույցերը, գնումների պլանները և բյուջեները
- հաստատել ծրագրերի տարեկան ծրագրային և ֆինանսական հաշվետվությունները,
- հաստատել 100.000 ԱՄՆ դոլարը գերազանցող աշխատանքների, ծառայությունների և ապրանքների գնման մրցույթների վերջնական արդյունքները՝ համապատասխան հիմնավորումներով,
- ծրագրի իրականացման ընթացքում հաստատել գործողության նախահաշվային արժեքում 100.000 ԱՄՆ դոլար գերազանցող փոփոխությունը՝ նախապես համաձայնեցնելով այն ՀԲ-ի հետ,
- կայացնել որոշումներ ծրագրերի իրականացման ընթացքում հայտնաբերված թերությունների և խախտումների, հաստատված տարեկան ժամանակացույցերից ու բյուջեներից շեղումների վերացման վերաբերյալ և վերահսկել այդ որոշումների կատարումը:

Ծրագրի իրականացման համար պատասխանատու կազմակերպություններ

Ծրագրի վարկառուն հանդիսանում է Հայաստանի Հանրապետությունը, որը ներկայացնում են ՀՀ ֆինանսների նախարարությունը՝ ֆինանսական հարցերի շրջանակում և ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը՝ բովանդակային հարցերի շրջանակում: ԿԳՄՍՆ-ն պատասխանատու կլինի ծրագրի քաղաքական և բովանդակային որոշումների կայացման համար:

Ենթաբաղադրիչ 1.1-ի շրջանակում իրականացվող նախադպրոցական կրթության միկրոծրագրերի իրականացման աշխատանքները համակարգելու նպատակով ՀՀ ԿԳՄՍ նախարարի հրամանով կստեղծվի կառավարման մարմին՝ հանձնաժողով, որի պարտականությունների շրջանակը սահմանված է համապատասխան ՂԶ-ում:

Բարձրագույն կրթության բաղադրիչի շրջանակում իրականացվող դրամաշնորհային ծրագրերի իրականացման աշխատանքները համակարգելու նպատակով ՀՀ ԿԳՄՍ նախարարի հրամանով կստեղծվի Նորարարությունների մրցակցային հիմնադրամի (ՆՄՀ) համակարգող խորհուրդ, որի պարտականությունների շրջանակը սահմանված է համապատասխան ՂԶ-ում: